ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆԻՑ. ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

«Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոն» ՀԿ

«Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ

ԵՐԵՎԱՆ 2025

Հեղինակներ՝

Արեգ Քոչինյան

2022 թվականից մինչ օրս զբաղեցնում է «Անվտանգության քաղաքականության հետազոտական կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահի պաշտոնը:
Արեգ Քոչինյանն ավարտել է Պրահայի Կարլի Համալսարանի Քաղաքական և տնտեսական հետազոտությունների ամերիկյան ինստիտուտը, ինչպես նաև ՀՀ արտաքին գործերի նախարարության դիվանագիտական դպրոցը: Քաղաքագետի և պատմաբանի մասնագիտական կոչումը ստացել է Երևանի պետական համալսարանում: Արեգ Քոչինյանը հեղինակ է հարյուրավոր հոդվածների, վերլուծությունների և հետազոտական աշխատանքների:

Email: areg.kochinyan@rcsp.am

Ռոբերտ Ղևոնդյան

2022 թվականից աշխատում ԱՔՀԿ-ում որպես փորձագետ՝ միաժամանակ փորձագիտական գործունեություն ծավալելով ՀՀ բարձրագույն գիտության և կրթության կոմիտեում և ՀՀ պետական կառավարման ակադեմիայում: 2021 թ. առ այսօր Երևանի Գլաձոր համալսարանում աշխատում է որպես դասախոս: 2000-ականներից նա մասնագիտական գործունեություն է ծավալում նաև մաքսային ոլորտում՝ որպես մաքսային ներկայացուցիչ: Ռոբերտ Ղևոնդյանը հեղինակ է ՀՀ-ում և արտերկրում հրապարակված ավելի քան 30 գիտական հոդվածների, ինչպես նաև մի քանի տասնյակ հրապարակախոսական նյութերի: Նա հանդես է գալիս նաև տարբեր հարցազրույցներով և վերլուծական մեկնաբանություններով: Քաղաքագետի կոչում ստացել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում, այնուհետև կրթությունը շարունակել է ՌԴ Դոնի Ռոստովի Հարավ-Դաշնային համալսարանում՝ ստանալով քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Email: robert.ghevondyan@rcsp.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 5
Տնտեսական սպառնալիքներ 7
Պարենային սպառնալիքներ..... 15
Ենթակառուցվածքային սպառնալիքներ 20
Էներգետիկ սպառնալիքներ 26
Տեղեկատվական սպառնալիքներ 33
Ֆիզիկական սպառնալիքներ 37
Ռազմաքաղաքական սպառնալիքներ 42
Ահաբեկչական սպառնալիքներ 45
Ժողովրդագրական սպառնալիքներ 47
Առաջարկություններ..... 53
Ամփոփիչ խոսք 59
Օգտագործված գրականություն..... 60
Ծանոթագրություն 63

ՆԱԽԱԲԱՆ

Ռուսաստանի Դաշնության հետ Հայաստանի Հանրապետության փոխհարաբերություններում միակողմանի կախվածությունների համալիրը մշտապես եղել է բնորոշիչ գործոն: Այդ կախվածություններն ունեցել են և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ պատճառներ: Սակայն մինչև վերջին երկու տարիները, այդ կախվածությունները որպես կանոն չեն էլ գնահատվել որպես մարտահրավեր կամ սպառնալիք, քանի որ Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականությունը հարմարեցվել է, իսկ որոշ վերլուծությունների համաձայն՝ կոորդինացվել է ռուսական շահերից ելնելով: 2020 թվականի 44-օրյա պատերազմից և դրան հաջորդած 2021 թ. մայիսի, 2022 թ. սեպտեմբերի ադրբեջանական հարձակումներից, ՀՀ ինքնիշխան տարածքների օկուպացիայից, Լաչինի միջանցքի անօրինական փակումից և արցախահայության բռնի տեղահանումից հետո, երբ Ռուսաստանը փաստացի հրաժարվեց կատարել ՀՀ անվտանգության ապահովման հարցում իր՝ պայմանագրային ու Արցախում ստանձնած խաղաղապահության և անվտանգության պարտավորությունները, իրավիճակը կտրուկ փոխվեց:

Ելնելով այս իրողություններից ու դրանց արդյունքում կառուցվող եզրահանգումից, կարելի է փաստել, որ սխալ էր անվտանգության այն կոնցեպցիան, որի համաձայն Ռուսաստանին էր արտապատվիրակվում Հայաստանի անվտանգության ապահովման գործի քաղաքական ու ռազմաքաղաքական պատասխանատվությունը:

Այժմ Հայաստանը փորձում է գտնել իր անվտանգության ամրապնդման ներքին ռեսուրսներ և այլ արտաքին ուղղություններ, ինչը չի համընկնում ՀՀ արտաքին ու ներքին քաղաքականության որպիսության մասին ռուսական իշխանությունների պատկերացումների հետ: Ըստ այդմ, Ռուսաստանից տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում միակողմանի կախվածությունները վերափոխվում

են Հայաստանի ազատության աստիճանը սահմանափակող մարտահրավերի, որը շատ արագ կարող է գործիքայնացվել Հայաստանի դեմ հիբրիդային պատերազմի միջոցների:

Այդ մարտահրավերին համարժեք պատասխաններ ձևավորելու նկատառումներով անհրաժեշտ ենք համարում վերլուծել տարբեր ոլորտներում ճնշում գործադրելու Ռուսաստանի հնարավորությունները և բացահայտել այդ ճնշման լիցքաթափման ուղիները: Ռազմական, տնտեսական, էներգետիկ, ենթակառուցվածքային, ժողովրդագրական և այլ սպառնալիքները Հայաստանի համար կենսական կարևորություն ներկայացնող խնդիրներ են: Առանց պատկերացնելու այս խնդիրներին համապարփակ լուծումներ տալու անհրաժեշտությունը և առանց ձևավորելու լուծումների համարժեք համակարգ՝ Հայաստանի Հանրապետության համար ինքնիշխանության ապահովման և պետականության ամրապնդման գերակայությունները մշտապես վտանգված կլինեն: Հետևաբար, աշխատանքում ոչ միայն խորությամբ ուսումնասիրվել են Ռուսաստանի կողմից Հայաստանի նկատմամբ ճնշման խողովակներն ու դրանց չեզոքացման Հայաստանի հնարավորությունները, այլև տրված են այդ հնարավորությունների կիրառման գործնական մեխանիզմներ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

Հայաստանի տնտեսական կախվածությունը Ռուսաստանից էականորեն կապված է ԵԱՏՄ անդամակցության հետ: Քանի որ ԵԱՏՄ շուկայում առևտուր անելը շատ ավելի հեշտ է մաքսային ընթացակարգերի քիչ և պարզ լինելու, ինչպես նաև ԵԱՏՄ պետություններից մի քանիսում որակական և այլ պահանջները շրջանցելու բազմաթիվ զարտուղի ճանապարհների առկայության պատճառով, տնտեսվարողը, հնարավորության դեպքում, նախընտրում է ապրանք գնել կամ վաճառել ԵԱՏՄ շուկայում:

2023 թ.-ին ԵԱՏՄ անդամ երկրների հետ ՀՀ առևտրաշրջանառությունը կազմել է 7 մլրդ 616 մլն ԱՄՆ դոլար, որը 2022 թ.-ի համեմատ ավելի է 43 տոկոսով: Այս ցուցանիշում արտահանումը կազմել է 3 մլրդ 609 մլն, իսկ ներմուծումը՝ 4 մլրդ 7 մլն ԱՄՆ դոլար: 2015 թ.-ի համեմատ՝ ԵԱՏՄ երկրների հետ ապրանքաշրջանառությունն աճել է ավելի քան 6 անգամ:

Միևնույն ժամանակ, Հայաստանի 8.3% ՀՆԱ աճը կրկնակիից ավելի գերազանցում է ԵԱՏՄ երկրների միջին ցուցանիշը՝ 3.7: Իսկ 2022 թ.-ին կազմել է 12.6%, այն դեպքում, երբ ԵԱՏՄ միջին ցուցանիշը բացասական է եղել: 2024 թ.-ին սպասվում է կրկին մեծ տարբերություն՝ 2.8% ԵԱՏՄ-ում և 5.5-6% ՀՀ-ում: Այս պատկերը հետաքրքիր է երկու առումով: Նախ՝ ՀՀ-ում նման ցուցանիշներն ուղղակի կախվածություն ունեն ԵԱՏՄ-ում ապրանքաշրջանառությունից, ինչը նշանակում է, որ ՌԴ-ի կողմից ԵԱՏՄ-ից Հայաստանին հեռացնելու ընդհանրական սպառնալիքը որոշակի հիմքեր ունի, թեև առավել խնդրահարույց է չափանիշներին համապատասխանության պահանջի միջոցով ՀՀ տնտեսությանը մեծ վնասներ հասցնելը: Մյուս կողմից, ԵԱՏՄ-ի միջին ցուցանիշները մի փոքր ավելի ցածր կլինեին, եթե այդտեղ չներառվեին Հայաստանի ցուցանիշները: Սակայն Ռուսաստանի համար ԵԱՏՄ անդամ Հայաստանը շատ ավելի կարևոր է մեկ այլ պատճառով: Որևէ պետություն դեռևս չի լքել ԵԱՏՄ-ն՝ այս

կազմակերպության ձևավորման պահից սկսած: Իսկ ՌԴ-ի կողմից այս կազմակերպությունը մշտապես ներկայացվում և գովազդվում է որպես Եվրամիությանը համարժեք տնտեսական ինքնաբավ կառույց: Այդ կառույցի զարգացումը դրվում է ռուսական ինտեգրացիոն նախագծերի հիմքում՝ որպես համառուսական առաջնորդության տարածաշրջանի տնտեսական բազիս: Ըստ այդմ, ԵԱՏՄ-ից հարավ-կովկասյան տարածաշրջանում ներկայում միակ անդամ պետության հեռացումը հակադրվում է տարածաշրջանային կայսերական գերակայության Ռուսաստանի պատկերացումներին և՛ իմիջային, և՛ առաջնորդության ամրապնդման ու ընդլայնման առումով: Այս գործոնները խոսում են մեդալի հակառակ երեսի՝ ԵԱՏՄ-ում ՀՀ-ի կարևոր դերակատարման մասին: Հարկ է նկատել, որ Հայաստանի հեռացման մասին խոսակցություններ սովորաբար լինում են «պատժի» տրամաբանության մեջ՝ ի պատասխան ՀՀ-ի կողմից հնարավոր որոշակի գործողությունների (օրինակ՝ ՀԱՊԿ կառույցը լքելը և այլն): Սակայն սպառնալիքի իրագործումը կարող է հարվածել հենց ԵԱՏՄ-ին՝ միջին ցուցանիշների էլ ավելի նվազման տեսքով:



Գծագիր 1. ՀՀ տնտեսության աճի դինամիկան և ԵԱՏՄ միջին ՀՆԱ-ի հետ հարաբերակցությունը 2021-2024 թթ.

Ինչպես նշեցինք՝ ՀՀ տնտեսական քաղաքականության մի զգալի մասը հիմնված է ԵԱՏՄ շուկայում առևտրաշրջանառության արդյունքում գոյացող միջոցների վրա: Եվ ԵԱՏՄ շրջանակներում իրականացվող գործունեությունից բխող սպառնալիքները ՀՀ տնտեսական ոլորտին մեծապես կարող են անհանգստացնել: Այդ սպառնալիքների գլխավոր ուղղությունը գոյություն ունեցող չափանիշների պահպանման պահանջն է: ԵԱՏՄ կարգավորումներից շատերը հստակ չափորոշիչներ են ենթադրում, սակայն հաշվի չեն առնում անդամ տարբեր պետությունների շուկաների էական տարբերությունները: Ըստ այդմ, բացի կոնկրետ դեպքերում դրանք շրջանցելու օրինակներից, որոշ դեպքերում մյուս պետությունները «աչք են փակում» մեկ պետությունում որոշակի չափանիշները չպահպանելու երևույթի նկատմամբ: Սակայն ճնշում գործադրելու անհրաժեշտության դեպքում ՌԴ-ի կողմից երբեմն այդ չափանիշների պահպանման պահանջներ են դրվում, ինչը կարող է բերել ՀՀ տնտեսական ոլորտում լուրջ խնդիրների առաջացման: Եթե փորձենք ավելի պարզ դիտարկել՝ տնտեսվարողների մոտ թողտվության թյուր կարծիք է ձևավորվում, որակի բարձրացման, բարեփոխումների, առաջընթացի կարիք չի զգացվում, ինչը, սակայն, անհրաժեշտ պահին դառնում է շահարկման հնարավորություն: Որպես օրինակ՝ կարող ենք հիշել 2023 թ.-ի ապրիլ ամսին ՀՀ ներմուծվող որոշ ապրանքների, այդ թվում՝ կենցաղային տեխնիկայի նկատմամբ մաքսազերծման գործընթացում համապատասխանության սերտիֆիկատների ստացման պահանջը, որի վերաբերյալ կարգավորումները երկար տարիներ գոյություն են ունեցել, սակայն, ինչպես շատ այլ դեպքերում, չի կարևորվել և ուշադրություն չի դարձվել դրանց: Այս պահանջի մասին «հիշելու» հետևանքով 4 օր շարունակ այդ ոլորտում շոկային իրավիճակ էր ձևավորվել: ՀՀ-ի կողմից բանակցությունների արդյունքում 4 օր անց այդ պահանջը ժամանակավորապես հանվեց և մինչ այժմ չի կիրառվում: Այս խնդիրը շատ ավելի ցցուն է դառնում ՀՀ-ից արտահանման հարցերում:

Այս սպառնալիքի դիմագրավման ակնհայտ ելքը ԵԱՏՄ անդամության դադարեցումն է, ինչը հնարավորություն կտա խուսափել շահարկումներից, սակայն դա էլ ներկա պայմաններում, ինչպես արդեն նշել ենք, հղի է այլ խնդիրներով: Այլընտրանքային լուծման գլխավոր ուղղությունը Հայաստանում արտադրվող ապրանքների որակական բարելավումն է՝ բարձր չափանիշների համապատասխանեցման նկատառումներով: Այդ գործընթացում պետության հնարավորությունները կարող են կիրառվել նոր կապեր և փոխհարաբերություններ հաստատելու համար՝ միջազգային գործընկերների հետ սերտ աշխատանքի, միջազգային փորձի դիտարկման և առաջատար տեխնոլոգիական միջոցներին հասանելիության համատեքստում: Տնտեսվարողների համար հիմնական աշխատանքային ուղղություններն են՝ այլ շուկաների հետ աշխատանքի ինտենսիվության ավելացումը, Թուրքիայի հետ սահմանի հնարավոր բացման դեպքում՝ թուրքական շուկան ներմուծման և արտահանման, ինչպես նաև տարանցման համար օգտագործումը և այլն:

Բացի նշված գլոբալ սպառնալիքը, Ռուսաստանը Հայաստանի՝ ԵԱՏՄ-ում անդամակցությունը կարող է օգտագործել վերջինիս դեմ այլ սպառնալիքներ ձևավորելու համար ևս: Դրանցից գլխավորը Լարսի անցակետի հարցն է: Տարբեր, հիմնականում՝ քաղաքական պատճառներով, Հայաստանից ԵԱՏՄ մնացած բոլոր ճանապարհները փակ են: ՀՀ-ԵԱՏՄ ցամաքային կապի միակ ճանապարհը Լարսի անցակետի միջոցով է, որտեղ ամենափոքր խնդիրն անգամ էական ազդեցություն է ունենում ՀՀ տնտեսության վրա: Իսկ Ռուսաստանը ժամանակ առ ժամանակ նման խնդիրներ ստեղծում է: Այդ խնդիրները ներառում են ֆիզիկական խոչընդոտներից (ճանապարհների վերանորոգում, աշխատանքների ձգձգում և հերթերի գոյացում, անցակետերի ոչ ամբողջական աշխատանք, եղանակային պայմաններ) մինչև ընթացակարգայինները (տարբեր մտացածին պատճառներով բեռների անցման արգելք, կոռուպցիա և անօրինական այլ

պահանջներ): Սա հատկապես մեծ ազդեցություն է ունենում գյուղատնտեսական արտադրանքների արտահանման վրա: Գյուղատնտեսական արտադրանքի մի մեծ հատված՝ 2024 թ.-ի տվյալներով՝ 17 տոկոսը, արտահանվում է, որի գերակշռող մեծամասնության ուղղությունը Ռուսաստանն է: Արտահանման հետ կապված խնդիրները հանգեցնում են տնտեսվարողների մոտ ոլորտի նկատմամբ հետաքրքրության նվազման: Անշուշտ, գյուղատնտեսության ոլորտի վրա ազդեցության գործոնները բազմաթիվ են, սակայն ՌԴ արտահանման հետ կապված խնդիրները էական նշանակություն ունեցողների շարքում են: Նաև այս խնդիրների հետևանքով 2022 թ.-ին ՀՀ տնտեսական աճի 12.6%-ում գյուղատնտեսական ոլորտի աճը կազմել է ընդամենը 0.4%: Իսկ 2023 թ.-ին այս ոլորտում ունեցել ենք անկում՝ 0.3%: Միայն 2024 թվականի ընթացքում Ռուսաստանում Հայաստանից արտահանվող սննդամթերքի մեջ չթույլատրված նյութերի առկայության մի քանի դեպք է գրանցվել: Օրինակ՝ օգոստոսի 16-ին ստուգված ելակի խմբաքանակում, ըստ Ռոսսելխոզնադզորի, եղել է վտանգավոր թունաքիմիկատ, որի պատճառով ելակի ներմուծումը Ռուսաստան արգելվել է:

Բայց այս ուղղությամբ սպառնալիքները, պաշտոնական կամ օրենսդրական խնդիրներից բացի, պարունակում են այլ խնդիրներ ևս: Որպես օրինակ՝ կարելի է հիշել ռուս գործարար Օլեգ Գուսովի մահը հայկական ջերմուկի հետ փոխկապակցելու փորձերի և նրա հարազատների կողմից «Ջերմուկ գրուպ» ընկերության դեմ 1.5 մլրդ ռուբլու դատական հայց ներկայացնելու դեպքը:

Մեկ այլ միջոց է ներքին կարգով հայկական մթերքի վաճառքի խնդիրներ ստեղծելը: Մեկ անգամ չէ, որ Ռուսաստանի տարբեր հատվածներում տնտեսվարողները հրաժարվել են ընդունել հայկական արտադրանք (այն դեպքում, որ նախկինում իրենց գործունեության մեջ մշտապես օգտագործել են հայկական սննդամթերք)՝ պատճառաբանելով, թե որոշ շրջանակներից հրահանգ ունեն: Օրինակ՝

2020 թ.-ի հուլիսին «Ֆուդ սիթի» և «Տվոյ դոմ» առևտրային ցանցերը հրաժարվեցին ընդունել հայկական սննդամթերք՝ պատճառաբանելով իրենց սեփականատերերի հրահանգը (ադրբեջանական ծագմամբ ՌԴ քաղաքացիներ):

2023 թ.-ի վերջին Վերին Լարսի անցակետում ավարտվեց վերանորոգումը, որի արդյունքում մաքսակետի թողունակությունը օրական 1115-ից բարձրացվեց մինչև 2500-3000 ավտոմեքենայի:

Տեխնիկական առումով սա հնարավորություն տվեց ամբողջությամբ խուսափել Հայաստան եկող և Հայաստանից գնացող բեռների կուտակումներից: Բայց միևնույն ժամանակ, վերոնշյալ և այլ սուբյեկտիվ պատճառներով, հայկական բեռները շարունակում են պարբերաբար խնդիրներ ունենալ անցակետը հատելու ժամանակ: Ի տարբերություն Հայաստանից մեկնող բեռների՝ Թուրքիայից ՌԴ ուղևորվող բեռների ծավալը թռիչքաձև աճել է: 2022 թ.-ին արդեն 2021 թ.-ի համեմատ այդ աճը կազմել է 62 տոկոս:

Վերին Լարս անցակետ

Վերանորոգումից հետո առաջին 3 ամիսների ընթացքում այդ թիվն ավելացել է ևս 20 տոկոսով: Նման իրավիճակ է նաև Ռուսաստանից դեպի Թուրքիա բեռնափոխադրումների դեպքում: Զարմանալի չէ, որ 2022-2023 թթ.-ին Ռուսաստանը, շրջանցելով Չինաստանին, դարձել էր Թուրքիայի ներմուծման գլխավոր ուղղությունը՝ համապատասխանաբար 58.8 մլրդ և 45.6 մլրդ ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով: Իսկ 2024 թ.-ին աննշան է զիջել Չինաստանին՝ այն էլ գլխավորապես պատժամիջոցների հետևանքով: Նման ցուցանիշների ձևավորման կարևորագույն գործոններից մեկը Վերին Լարսի անցակետի արդիականացումն է: Կարելի է արձանագրել, որ Վերին Լարսի անցակետի վերանորոգումից օգուտներ քաղել է գլխավորապես Թուրքիան:

Հայաստանից արտահանման ուղղությամբ սպառնալիքների նվազեցման կարևորագույն միջոցը ևս դիվերսիֆիկացումն է: Խոսքը վերաբերում է հատկապես գյուղատնտեսական և թեթև արդյունաբերության արտադրանքի արտահանմանը: Հարկ է նկատել, որ մասնավորապես ԵՄ ու Պարսից ծոցի երկրներ արտահանման կտրուկ ավելացման համար անհրաժեշտ է որակական էական բարեփոխումներ կատարել: Այդ փոփոխությունները ներառում են ֆինանսական և ժամանակի զգալի ծախսեր ու տեխնիկատնտեսական բարեփոխումներ: Ինչպես արդեն նշել ենք, այս հարցում անհրաժեշտ է պետական ռազմավարական պլանավորում և հասարակության համախմբում՝ նպատակի հստակ նախանշման և պլանավորված քայլերի իրականացման վերաբերյալ վերջինիս իրազեկման միջոցով:

Կապված բնակլիմայական պայմանների ու աշխարհագրական դիրքի հետ՝ Պարսից ծոցի երկրներում տեսականորեն կարող է լինել հայկական արտադրանքի մեծ պահանջարկ, ինչը հիմնավորվում է ԱՄԷ-ում, Սաուդյան Արաբիայում և Պարսից ծոցի այլ երկրներում

տարբեր ցուցահանդեսներին ու կոնֆերանսներին հայկական արտադրանքի հանդեպ առկա հետաքրքրությամբ: Իրանի Չաբահար նավահանգստի՝ ողջ ներուժով գործարկման դեպքում, հաշվի առնելով ծոցի երկրների բնակլիմայական պայմաններն ու գյուղատնտեսական ապրանքների բնական մեծ պահանջարկը, հայկական արտադրանքի արտահանման այս ուղղությունը կարող է կարճաժամկետ հեռանկարում որոշակի այլընտրանք դառնալ ԵԱՏՄ շուկային:

Հարկավոր է նկատել, որ հնարավոր զարգացման դեպքում, եթե Հայաստանը լքի ԵԱՏՄ-ն, դա ամենևին չի ենթադրում ԵԱՏՄ շուկայից ամբողջական դուրսմղում: Նախ՝ Ղազախստանի, Բելառուսի և Ղըրղըզստանի հետ առևտրային համագործակցությունը կշարունակվի երկկողմ ձևաչափով: Համագործակցության արդյունավետությունը ՌԴ-ի հետ ևս կարող է չտուժել՝ կախված իրավիճակից, ԵԱՏՄ-ն լքելու շուրջ հնարավոր պայմանավորվածություններից, տարածաշրջանային և գլոբալ զարգացումներից և այլ գործոններից: Կարելի է հիշել ռուսական ինտեգրացիոն նախագծերից դուրս եկած պետությունների օրինակներ, մասնավորապես՝ Ուզբեկստանը կամ Ադրբեջանը, որոնք, բազմակողմանի աշխատանքի իրականացման արդյունքում, Ռուսաստանի հետ հասել են երկկողմ փոխգործակցության՝ իրենց համար շահավետ համաձայնությունների: ԵԱՏՄ-ից «AXIT»-ը («Armenian Exit» Հայաստանի ելքը) կարող է լինել ինչպես կոշտ, այնպես էլ երկկողմանի ընդունելի պայմանավորվածությունների համատեքստում:

ՊԱՐԵՆԱՅԻՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

Մեկ այլ սպառնալիք է Ռուսաստանից պարենային ապրանքների ներմուծումը: Հայաստանին պարենային ապրանքների մատակարարման հետ կապված սպառնալիքը համեմատաբար նոր ձևավորված խնդիր է: Վերջերս ՌԴ ԱԳՆ խոսնակն իր խոսքում նշեց, որ «Հայաստանն իր հացահատիկի 90 տոկոսը գնում է Ռուսաստանից, վերջինս կերակրում է Հայաստանին և ապահովում է պարենային անվտանգությունը»: Սա կարելի է ընդունել որպես պարենային անվտանգության սպառնալիքի առաջին դրսևորում:

Աղյուսակ 1-ում կարող ենք տեսնել Հայաստան ներմուծվող չորս առաջնային պարենային ապրանքների բացարձակ քանակները և ընդհանուր ներմուծման ծավալում ՌԴ-ից դրանց ներմուծման մասնաբաժինները:

Աղյուսակ 1. Ներմուծվող չորս պարենային ապրանքների քանակներն ու Ռուսաստանից դրանց ներմուծման տեսակարար կշիռը

Ներմուծում հազար տոննա	2018	2019	2020	2021	2022	2023	2024 01.01 - 01.07
ԹՌՉՆԻ ՄԻՍ	32.9	43.6	36.5	38.5	38.4	39.0	21.16
ՌԴ-ից	4.9	5.0	7.75	5.8	9.5	9.83	
Տես. կշիռը, %	14.9	11.5	21.2	15.1	24.7	25.2	
ՑՈՐԵՆ	325.8	250.3	354.2	330.4	365.1	343.6	133.18
ՌԴ-ից	294.8	221.7	250.8	269.8	365.0	343.5	
Տես. կշիռը, %	90.5	88.5	70.8	81.7	99.9	99.9	
ԲՈՒՍԱԿԱՆ ՅՈՒՂ	26.4	26.2	28.3	27.7	34.4	33.9	14.41
ՌԴ-ից	25.3	25.4	27.5	24.7	32.0	31.9	
Տես. կշիռը, %	95.8	96.9	97.2	89.8	93.0	94.0	
ՇԱՔԱՐ	82.0	55.8	73.8	74.8	76.5	44.2	15.01
ՌԴ-ից	4.9	14.1	32.2	27.0	1.06	36.2	
Տես. կշիռը, %	6.0	25.3	43.6	36.1	1.4	81.9	

Ինչպես համոզվում ենք, ցորենը և բուսական յուղը գրեթե ամբողջությամբ վերջին 2 տարիներին ներմուծվել են ՌԴ-ից, իսկ շաքարավազի տոկոսը 2023 թ.-ին հասել է 81.9-ի, այն դեպքում, երբ նախորդ տարիներին անհամեմատ քիչ էր: Ըստ ներմուծման ծավալի՝ 4-րդ պարենամթերքը թռչնի միսն է, որի ներմուծման տեսակարար կշիռը 2023 թ.-ին կազմել է 25.2 տոկոս: ՌԴ-ից ՀՀ այլ մթերքների ներմուծման ծավալն ավելի փոքր է:

Ակնհայտ է, որ նշված արտադրանքի քանակի, որակի, գնի, առաքումների և այլ միջոցներով Հայաստանի նկատմամբ ՌԴ-ի ազդեցության լայն հնարավորություններ կան: Այս սպառնալիքի կառավարման նպատակով հնարավորությունները հանգում են երկու ուղղությունների՝ տեղական արտադրության խթանում և ներմուծման դիվերսիֆիկացում:

Այսպես՝ եթե ցորենի և շաքարի արտադրության տեղական հնարավորությունները խիստ սահմանափակ են, և դրանց խնդրի լուծման հիմնական ճանապարհը ներմուծման ուղղությունների դիվերսիֆիկացիան է, ապա թռչնի մսի և բուսական յուղի դեպքում ՀՀ-ի ներսում կա պահանջարկի բավարարման ներուժ:

Ցորենի արտադրությունը ՀՀ-ում բավարարում է ընդամենը ներքին պահանջարկի 20 տոկոսը: Թեև առկա վարելահողերի մեծ մասը չի օգտագործվում, բայց ցորենի աճեցման խնդիրները միայն դրանով չեն սահմանափակվում: Բարձր բերքատվությամբ սորտերի ձեռքբերումը կամ մշակումն անհրաժեշտ պայման է, եթե ՀՀ-ում աճող ցորենի միջոցով պահանջարկի էական մասի բավարարման խնդիր դրվի: Մյուս կողմից՝ ներմուծման դիվերսիֆիկացումը ևս կարելի է դիտարկել: Ցորենի և այլ հացահատիկների շուկայում Ուկրաինան, Ղազախստանը, Հնդկաստանը, Ռումինիան և հարևան Իրանը կարող են լինել այն ուղղությունները, որոնք կարելի է օգտագործել ՌԴ-ից ներմուծումը նվազեցնելու նպատակով: Նշված պետությունները հանդիսանում են հացահատիկի արտահանման առաջատար երկրներ: Օրինակ, Ուկրաինայում 2024 թ.-ին շուրջ 77 մլն տոննա հացահատիկ է հավաքվել:

Այս ցուցանիշով Ուկրաինան Եվրասիական մայրցամաքում առաջատարներից է և բազմաթիվ ուղղություններով արտահանում է իրականացնում: Ընդ որում, ուկրաինական ցորենի գինը, որպես օրինակ, համադրելի է ռուսականի հետ. 2024 թ. ամռանը ուկրաինական ցորենի մեկ տոննայի արտահանման միջին գինը եղել է մոտ 174.5 ԱՄՆ դոլար, իսկ ռուսական ցորենը Հայաստանը նույն ժամանակամիջոցում ձեռք է բերել մեկ տոննան 164.5 ԱՄՆ դոլարով: Ուկրաինայից և Ռումինիայից ցորենի տեղափոխումը Սև ծովի վրայով կարող է լոգիստիկ խնդիրների լուծում հանդիսանալ՝ հաշվի առնելով, որ ի տարբերություն ռուս-ուկրաինական պատերազմի առաջին տարվա, ներկայում Ուկրաինայի սևծովյան նավահանգիստների մեծ մասն ամբողջ արտադրողականությամբ աշխատում է: Իրանը ևս հացահատիկի արտահանման մեծ փորձ ունի: Մասնավորապես, 2023 թ.-ին Իրանն արտահանել է ավելի քան 23 մլն տոննա հացահատիկ: Իրանից հացահատիկի արտահանման հիմնական

ուղղություններն են՝ Օմանը, ԱՄԷ-ն, Թուրքիան, Ադրբեջանը, Տաջիկստանը: Այլ ուղղություններից ներկրման դեպքում մրցակցային գին ստանալու համար խնդրահարույց կարող է լինել միայն ԵԱՏՄ կարգավորումների խնդիրը: Սակայն ռիսկերի կառավարման և այս շուկայում դիվերսիֆիկացիայի ապահովման տրամաբանությունում՝ ՀՀ կառավարությունը կարող է փորձել ժամանակավորապես սուբսիդավորել գնի տարբերությունը:

Որպես գաղափար՝ հարկավոր է դիտարկել և հավելյալ ուսումնասիրել նաև Թուրքիայից Ցորենի ուղիղ ներկրման հնարավորությունը:

Համանման օրինակ է շաքարի արտադրությունը: Թեև Արթիկում կառուցվել է շաքարի գործարանը, սակայն ՀՀ-ում շաքարի ճակնդեղի աճեցման և վերամշակման հնարավորությունը խիստ սահմանափակ է: Այնուամենայնիվ, ներմուծման այլ ուղիներ ևս առկա են: Օրինակ, հարևան Իրանը, որն ունի շաքարի դեֆիցիտ, ներկրում է Բրազիլիայից, ԱՄԷ-ից, Հնդկաստանից, Բելգիայից և Չինաստանից: Ընդ որում՝ Բրազիլիան աշխարհում շաքարի ամենամեծ ծավալներ արտադրողն է, երկրորդը Հնդկաստանն է: Գնային առումով Ռուսաստանը զիջում է նույն Բրազիլիային և Հնդկաստանին: Միևնույն ժամանակամիջոցում ՌԴ-ից առաջին կարգի շաքարավազի արտահանման գինը կազմում է մոտ 680 ԱՄՆ դոլար, իսկ Բրազիլիայում և Հնդկաստանում՝ մոտ 530 ԱՄՆ դոլար մեկ տոննայի համար: Շաքարավազի ներկրման դեպքում ևս, հացահատիկի նմանությամբ, խնդրահարույց է մնում երրորդ երկրներից ԵԱՏՄ ներմուծման կարգավորումների հարցը: Սակայն նշված բոլոր ուղղություններով համակարգային աշխատանքի դեպքում կարելի է Ռուսաստանից շաքարի ներկրման ծավալները ևս կտրուկ նվազեցնել:

Թռչնի մսի ինքնաբավության մակարդակի բարձրացման միակ խոչընդոտը ֆուրաժային հացահատիկի պակասն է: 2006-2008 թթ.-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը փորձեց տեղում

պետական աջակցությամբ զարգացնել եգիպտացորենի արտադրությունը, սակայն մեր բնակլիմայական պայմաններում ստացվող արդյունքը տնտեսապես չարդարացրեց (ցածր բերքատվություն և միավորի հաշվով մեծ ծախսեր): Ուստի, անհրաժեշտ է կատարել սելեկցիոն աշխատանք և ստանալ լավ հարմարեցված սորտեր ու հիբրիդներ: Եգիպտացորենի ներկրման հարցում ևս Իրանը կարող է լինել առանցքային ուղղություն: Եթե քաղաքական խնդիրները կարգավորվեն, ապա եգիպտացորեն կարելի է ներկրել նաև Թուրքիայից:

Թռչնի մսի խնդրի լուծման մեկ այլ տարբերակ է այլ ուղղություններից ներկրումը: Այս հարցում գլխավոր խոչընդոտը ԵԱՏՄ մաքսատուրքերն են: Երրորդ երկրներից ԵԱՏՄ տարածք թռչնի թարմ կամ սառեցված մսի ներմուծման համար սահմանված է 80 տոկոս մաքսատուրք, ինչը, փաստացի, անհնարին է դարձնում մրցակցային գին ձևավորելը: Հետևաբար, ԵԱՏՄ անդամության դադարեցումն ինքնին կնշանակի սեփական շուկայի դիվերսիֆիկացում: Այլ խոսքերով՝ ԵԱՏՄ անդամ չհանդիսացող Հայաստանն ինքը կկարողանա սեփական շուկայում կառավարել գնագոյացման գործընթացը, մասնավորապես՝ ողջամիտ մաքսատուրքեր սահմանելով թռչնի միսն այլ ուղղություններից ներկրելու դեպքում:

Բուսական յուղի տեղական արտադրության ռեսուրսը խիստ սահմանափակ է, բայց չպետք է անտեսել սոյայի յուղի արտադրության հնարավորությունները: 1980-1990-ական թվականներին ԳԱԱ սելեկցիոներները ստացել էին բարձր բերքատվությամբ սոյայի սորտեր, որոնց մշակությունը մոռացության է մատնվել: Թեև այժմ էլ կան ուսումնասիրություններ, որոնք ներկայացնում են ֆուրաժային հացահատիկի արտադրության ծավալների ավելացման հնարավորությունները և դրա կարևորությունը:

Ընդհանուր առմամբ՝ Ռուսաստանի ձեռքին Հայաստանի նկատմամբ ազդեցության գլխավոր գործիքը տնտեսական

սպառնալիքներն են: Դրանք սպառնում են և՛ սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացմանը, և՛ քաղաքական դաշտում մարգինալության ավելացմանը, և՛ ժողովրդագրական խնդիրների խորացմանը, և՛ այլ ուղղություններով բարդ իրավիճակների ձևավորմանը, եթե ՌԴ-ում դրանք անհրաժեշտ համարվեն: ՌԴ-ի կողմից տնտեսական սպառնալիքների կառավարելիության բարձրացումը՝ ՀՀ կարողունակությունների ավելացման ու գործընկերների դիվերսիֆիկացման միջոցով, բեկումնային նշանակություն կարող է ունենալ ՀՀ-ՌԴ փոխհարաբերություններում՝ հիերարխիկ միտումների հավասարակշռման առումով:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

2008թ.-ին Հայաստանի Հանրապետության և «Հարավ-Կովկասյան երկաթուղիներ» ՓԲԸ (ՀԿԵ) միջև կնքվել է ժամանակավոր կառավարման կոնցեսիոն պայմանագիր: Համաձայն այդ պայմանագրի՝ Հայաստանի երկաթուղիները 30 տարի ժամկետով հանձնվել են նշված ՓԲԸ-ի կառավարմանը, որը կողմերի ցանկությամբ կարող է երկարացվել ավարտից 10 տարի առաջ՝ ևս 10 տարով: Ըստ այդմ՝ ներկա պահին պայմանագիրը նախատեսված է մինչև 2038 թ.-ը: «Հարավ–Կովկասյան երկաթուղիներ» ՓԲԸ-ն հանդիսանում է ՌԴ կառավարության կողմից կառավարվող կազմակերպության՝ «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի դուստր ձեռնարկությունը: Փաստորեն, հայկական երկաթուղային ցանցն ամբողջապես կառավարվում է ՌԴ-ի կողմից: Սա ոչ միայն ճնշում գործադրելու և ազդեցություն ձևավորելու առումով ենթակառուցվածքային սպառնալիք է, այլև արգելակում է այլ ուղղություններով

զարգացման հնարավորությունները: Որպես օրինակ՝ կարելի է նշել ՀՀ-ի կողմից առաջարկված «Խաղաղության խաչմերուկ» նախագծի իրականացումը: Ոչ միայն աշխարհաքաղաքական կենտրոնների, այլև տարածաշրջանի պետությունների՝ Թուրքիայի և Ադրբեջանի իրական կամ կեղծ դիրքորոշումներն այս հարցում ցույց են տալիս, որ «Խաղաղության խաչմերուկ» նախագծի կյանքի կոչվելու հնարավորությունները խիստ սահմանափակվում են, այդ թվում նաև՝ ՀՀ կողմից սեփական ինքնիշխան տարածքում հաղորդուղիների նկատմամբ ամբողջական վերահսկողության բացակայության պատճառով:

Այս նախագծի իրականացումը, փաստորեն, անմիջականորեն առնչվում է ՀԿԵ կամ որ նույնն է՝ Ռուսաստանի կառավարման ներքո գտնվող հաղորդուղիների հետ: Մեր գնահատմամբ՝ «Խաղաղության խաչմերուկ» նախագիծն իր ներկայիս տեսքով չի կարող իրականություն դառնալ առանց Հայաստանի երկաթուղային ցանցի կառավարչի փոփոխության:

ՀԿԵ-ի գործունեությունը վնասաբեր է ոչ միայն զարգացման այլընտրանքային հնարավորությունների արգելակման առումով: 2008-2024 թվականների ընթացքում, թեև ըստ պաշտոնական տվյալների ՀԿԵ-ի կողմից Հայաստանում կատարվել են 144.3 մլրդ դրամի ներդրումներ, սակայն մի շարք փաստեր կան, որոնք վկայում են ՀԿԵ-ի կողմից պայմանագրով նախատեսված ներդրումների վերաբերյալ պարտավորվածության և այլ բազմաթիվ խախտումների մասին: Ստորև կքննարկենք այդ փաստերից առավել մեծ հետաքրքրություն ներկայացնողները:

«Հարավ-Կովկասյան երկաթուղիներ» ՓԲԸ (ՀԿԵ)

Նախ, հարկ է նշել, որ երկաթուղային փոխադրումները ՀՀ-ում համարվում են «պլանային վնասաբեր», որի փոխհատուցման նպատակով ՀՀ կառավարությունն ամեն տարի սուբսիդավորում է ՀԿԵ-ի կրած վնասները: 2016 թ.-ից սկսած սուբսիդավորման գումարը պետք է կազմի վնասի 30 տոկոսը: Այդ թիվը և ՀԿԵ-ի կողմից վճարված կոնցենսիոն վճարը 2016-2022 թթ.-ին հավասար գումար են կազմել (Գծագիր 2): 2023 թ.-ին նույնպես ՀՀ-ի կողմից սուբսիդավորվել է կոնցենսիոն վճարի չափով գումար՝ 332 մլն ՀՀ դրամ:

ՀԿԵ-ն ծախսերի ցանկում ընդգրկում է պայմանագրով չնախատեսված ծախսեր (օրինակ՝ բեռնափոխադրման ծախսերը), որոնք ուռճացնում են ընկերության կրած վնասը: Բացի այդ, ՀԿԵ-ն որպես ներդրում է ներկայացնում շարժակազմերի համար կատարված ծախսերը այն դեպքում, երբ ըստ պայմանագրի 11 հոդվածի 1-ին մասի՝ շարժակազմերը վաճառվել են ՀՀ-ի կողմից և ՀԿԵ-ի սեփականությունն են, հետևաբար, դրանց սպասարկումը չպետք է ներառվի

պայմանագրով նախատեսված ներդրումների ծավալում: Չարաշահումներ և անարժանահավատ տեղեկություններ կան նաև տարբեր տարիներին ավտոմեքենաների վառելիքի, աշխատակիցների մասնագիտական արտահագուստի, գովազդի և մի շարք այլ կարիքների համար կատարված ծախսերի հաշվարկներում:



Գծագիր 2. ՀԿԵ-ի կողմից ՀՀ պետբյուջե վճարված կոնցենսիոն վճարի և ՀՀ կողմից տրամադրված սուբսիդիայի հարաբերակցությունը 2009-2022թթ.-ին:

Բացի ֆինանսական խնդիրները, ՀԿԵ-ի կողմից կոնցենսիոն պայմանագրի այլ խախտումներ ևս գոյություն ունեն: Առաջին հերթին հարկ է ընդգծել, որ ՀՀ-ում երկաթուղային ցանցի որևէ զարգացում տեղի չի ունեցել: Ավելին, զարգացման վերաբերյալ պայմանավորվածություններից երկուսը էական ազդեցություն են ունեցել ՀՀ-ում ընդհանուր ենթակառուցվածքների զարգացման վրա:

1. ՀԿԵ-ն չի կատարել Վանաձոր-Ֆիոլետովո 31.2 կմ երկարությամբ երկաթգծի կառուցման աշխատանքները, ինչը թույլ կտար Երևան-Թբիլիսի երկաթուղային հաղորդակցությունը կրճատել

112 կմ-ով: Նույնիսկ երկաթուղային ցանցի ներկայիս անմխիթար պայմաններում՝ այս հատվածի շինարարությունը հնարավորություն կտար էականորեն կրճատել ուղևորների և բեռների տեղափոխման ժամանակը: Ըստ ամենայնի՝ ՀԿԵ-ի կողմից այս զարգացման կասեցումը պայմանավորված է սեփական շահերին դեմ լինելու հանգամանքով: Բանն այն է, որ ճանապարհի նման կրճատումը կարող է նվազեցնել բեռնափոխադրման համար վճարվող գումարը, ինչն իր հերթին կնվազեցնի ՀԿԵ-ի եկամուտը:

2. Մեկ այլ դեպքում ևս, ՀԿԵ-ի կողմից անգործության հետևանքով, փաստացի կասեցվել է Երևանի մետրոպոլիտենի «Չարբախ» կայարանից «Զվարթնոց» օդանավակայան երկաթգծի կառուցման նախագիծը: Այս դեպքում ևս Հայաստանը տարիներ շարունակ ժամանակային, էներգետիկ և նյութական անդառնալի կորուստներ է կրել և այսօր էլ շարունակում է կրել: «Չարբախ» - «Զվարթնոց» երկաթուղու կառուցումն իր հերթին մեծ եկամտաբերություն չի ենթադրել, ինչը, հավանաբար, ՀԿԵ-ի կողմից գործընթացը չիրականացնելու հիմք է հանդիսացել:

Ինչպես տեսնում ենք, երկու դեպքում էլ ռուսական կազմակերպությունը առաջնորդվել է բացարձակապես սեփական շահերով՝ անտեսելով Հայաստանի Հանրապետության պետական շահը:

ՀԿԵ-ի կողմից Հայաստանի երկաթուղային ցանցի կառավարումն ու շարունակական խախտումները ՌԴ-ի ձեռքում կարևոր լծակ են: Պայմանագրում նշված որոշ կարգավորումներ ուղղակի սպառնում են ՀՀ-ի անվտանգությանը: Այսպես՝ պայմանագրի հոդված 10-ի 1-ին մասի համաձայն՝ ՀԿԵ-ն իրավունք ունի առանց ՀՀ-ի հետ համաձայնեցման երկաթուղու ակտիվներն ու հողամասերը տրամադրել երրորդ կողմի, թեև իր իրավունքներն ու պարտավորությունները փոխանցել չի կարող (հոդված 19, մաս 5): Կա վտանգ, որ 3-րդ կողմը կարող է լինել ՀՀ-ի հանդեպ ոչ բարյացակամ տրամադրված

ներքին կամ արտաքին դերակատար: Այս դեպքում Հայաստանը կարող է անդրադառնալ պայմանագրի խզման հարցին՝ պարտավորությունների կատարման հարցում թերացման հիմքով: Սակայն հարկ է ուսումնասիրել, թե նման պարագայում ինչպես պետք է ոլորտը գործի պայմանագիրը խզելուց հետո: Բացի ինստիտուցիոնալ սպառնալիքները, վտանգ են ներկայացնում նաև ՀԿԵ-ի կողմից ներքին ուղևորափոխադրումները և բեռնափոխադրումները հին, ֆիզիկապես ու բարոյապես մաշված շարժակազմերով իրականացնելը, երկաթգծերի մաշվածության հետևանքով՝ շարժակազմերի շատ ցածր արագությունը: Այս գործոնները կարող են առիթ հանդիսանալ Հայաստան ներմուծվող անվտանգային նշանակություն ունեցող արտադրատեսակների՝ ցորեն, առաջնային պարենամթերքներ, վառելիք և այլն, կանխամտածված ուշացումների, վթարների և չեղարկումների: Անշուշտ, անհանգստացնող է նաև ուղևորափոխադրումների գործընթացում ՀԿԵ-ի կողմից ՌԴ-ից ուղիղ ցուցումով խնդիրների ստեղծումը:

ԷՆԵՐԳԵՏԻԿ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

Էներգետիկայի ոլորտում Հայաստանի կախվածությունները Ռուսաստանից համակարգային են ու բազմաշերտ, դրանք ձևավորվել են տասնամյակների ընթացքում ու պարուրել էներգետիկայի ողջ համալիրը: Իր հերթին, Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում էներգետիկան ունի հիմնարար նշանակություն. յուրաքանչյուր գնային փոփոխություն կամ աշխատանքի դադար այս ոլորտում միանգամից իր ազդեցությունն է ունենում սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր ոլորտների վրա:

Կախվածությունների առաջին շերտը էներգիայի աղբյուրներն են:

Աղյուսակ 2. 2021-2023 թթ. Հայաստան ներկրվող բնական գազի ընդհանուր ծավալները և Ռուսաստանից Հայաստան բնական գազի ներկրման ծավալները:

ԹՎԱԿԱՆ	ԸՆԴԱՄԵՆԸ՝ Միլիոն ԽՄ	ՌԴ՝ Միլիոն ԽՄ	ՌԴ՝ ՏՈԿՈՍ
2021	2793.8	2449.2	84.66
2022	2971.4	2599.6	87.49
2023	2730.8	2360.4	86.44

Թեպետ Հայաստան ներկրվող մյուս էներգակրի՝ ուրանի տվյալները գաղտնագրված են, կարելի է ենթադրել, որ այդտեղ անկախ քանակից ներկրումն ամբողջությամբ՝ 100 տոկոսով, տեղի է ունենում ՌԴ-ից:

Էներգետիկ աղբյուրների այս համայնապատկերը, համադրված ՀՀ-ում էլեկտրաէներգիայի արտադրման տվյալների հետ, ցույց են տալիս (տես ստորև), որ ՀՀ-ում արտադրվող էլեկտրաէներգիայի շուրջ 66 տոկոսը հանդիսանում է ուղիղ կախվածություն ՌԴ-ից: Սա պետք է դիտարկել որպես առաջնային խնդիր: Առանց այս ցուցանիշի նվազեցման հնարավոր չէ խոսել Հայաստանի արտաքին

քաղաքական դիվերսիֆիկացիայի հետագա ինստիտուցիոնալ ընթացքի մասին:



Գծագիր 3. Էլեկտրաէներգիայի արտադրության ուղիները ՀՀ-ում 2021 թ.-ին:



Գծագիր 4. Էլեկտրաէներգիայի արտադրության ուղիները ՀՀ-ում 2022 թ.-ին:



Գծագիր 5. Էլեկտրաէներգիայի արտադրության ուղիները ՀՀ-ում 2023 թ.-ին:

էական կախվածություն են նաև ՀՀ էներգետիկ համակարգում առկա ռուսական ակտիվներն ու կոնցեսիաները: Հրազդանի ՋԷԿ հինգերորդ էներգոբլոկի, «Գազպրոմ Արմենիայի» ու «Հայաստանի էլեկտրական ցանցերի» (ՀԷՑ)՝ սեփականության իրավունքով ռուսաստանյան օլիգարխիկ կամ պետական կապիտալին պատկանելը ռազմավարական խոցելիություն է Հայաստանի համար, հատկապես՝ հաշվի առնելով այդ ձեռնարկությունների աղետային աստիճանի վատ կառավարման ու կոռուպցիոն զարգացումների մասին առնվազն հանրության շրջանում առկա տեղեկությունները: Հայ-ռուսական հարաբերությունների շեշտակի էսկալացիայի դեպքում անհրաժեշտ է ունենալ հստակ մշակված սցենար «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետություն բնական գազի, նավթամթերքների և չմշակված բնական ալմաստների առաքման ոլորտում համագործակցության մասին» 2013 թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրի լուծարման վերաբերյալ: Անհրաժեշտ է ՀԷՑ, «Գազպրոմ Արմենիա», Հրազդանի ՋԷԿ օբյեկտները հայկական վերահսկողության տակ վերադարձնելու ուղղությամբ սցենարներ մշակել: Մեր կարծիքով՝ լավագույն լուծումները կլինի մասնավորի կառավարմանը հանձնված պետական սեփականության կամ ՀՀ տարածքում գործող իրավաբանական ու ֆիզիկական անձանց սեփականության մոդելը:

Նմանապես, լուրջ կախվածություն է նաև ռուսական կոնցեսիոն կառավարմանը հանձնված Հայկական ատոմային էլեկտրակայանի (ՀԱԷԿ) դրությունը, ընդ որում՝ մի քանի պատճառներով:

Նախ, ինքնին փաստը, որ ատոմակայանը կառավարում է օտարերկրյա և հատկապես ռուսական ընկերություն, խնդրահարույց է: Հայաստանին անհրաժեշտ է հնարավորինս արագ ձևավորել անհրաժեշտ կարողություններ կառավարումը սեփական վերահսկողության տակ վերցնելու համար: Բացի այդ, ինչպես արդեն նշվել է՝

ատոմակայանի վառելիքը՝ UO2 հարստացված U235-ով, ամենայն հավանականությամբ ամբողջությամբ ներկրվում է մեկ երկրից՝ Ռուսաստանից: Սրա տեխնիկական հիմնավորումն ատոմակայանի ռեակտորի համար անհրաժեշտ կոնկրետ վառելիքն է, որն արտադրվում է միայն ՌԴ-ում: Անհրաժեշտ է, սակայն, հաշվի առնել, որ Ուկրաինայում նույն ՋՋԵՌ-440 ռեակտորը վերջերս վերազինվել է ու հարմարեցվել է ամերիկյան վառելիքով աշխատելուն: Սա նշանակում է, որ կարճաժամկետ կտրվածքում հնարավոր է ապահովել ՀԱԷԿ-ի աշխատանքը այլ վառելիքներով: Իսկ առավել երկարաժամկետ լուծումն այլևս հնացած ատոմակայանի փոխարինումն է նոր ժամանակակից տեխնոլոգիաներով: Վերլուծելով կառավարության հանրային հաղորդագրությունները՝ կարելի է ենթադրել, որ խոսքը ամերիկյան մոդուլային ռեակտորների մասին է:

Հայկական ատոմային էլեկտրակայան (ՀԱԷԿ)

Բավականին կարևոր է նաև տրանսպորտի ոլորտում առկա էներգետիկ կախվածությունը: Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 3-ում՝ Հայաստանում տրանսպորտի բացարձակ մեծամասնությունն

օգտագործում է ածխաջրածնային վառելիք, որն էլ, իր հերթին, հիմնականում ներկրվում է ՌԴ-ից:

Աղյուսակ 3. 2021/2022 թվականներին տրանսպորտի վառելիքի հարաբերակցությունը:

ԹՎԱԿԱՆ	ԲԵՆԶԻՆ/ ԴԻԶԵԼ	ԲՆԱԿԱՆ ԳԱԶ/ ՀԵՂՈՒԿ ԳԱԶ	ԷԼ. ԷՆԵՐԳԻԱ
2021	52.2%	46.9%	0.9%
2022	52.1%	46.9%	1.0%
2023	60.4%	38.7%	0.8%

Աղյուսակ 4. 2021-2023 թթ. Հայաստան ներկրվող բենզինի ու դիզ. վառելիքի ընդհանուր ծավալները և Ռուսաստանից Հայաստան բենզինի ու դիզ. վառելիքի ներկրման ծավալները:

ԹՎԱԿԱՆ	ԸՆԴԱՄԵՆԸ՝ ՏՈՆՆԱ	ՌԴ՝ ՏՈՆՆԱ	ՌԴ՝ ՏՈԿՈՍ
2021	226394.3	170163.7	75.16
2022	224891.1	212754.3	94.6
2023	219155.6	198744	90.68

Աղյուսակ 5. 2021-2023 թթ. Հայաստան ներկրվող հեղուկ գազի ընդհանուր ծավալները և Ռուսաստանից Հայաստան հեղուկ գազի ներկրման ծավալները:

ԹՎԱԿԱՆ	ԸՆԴԱՄԵՆԸ՝ ՏՈՆՆԱ	ՌԴ՝ ՏՈՆՆԱ	ՌԴ՝ ՏՈԿՈՍ
2021	34963.6	19715.3	26.8%
2022	90257.6	81502.6	90.3%
2023	126069.1	129761.1	96.1%

Թեպետ, ինչպես տեսնում ենք Աղյուսակներ 4-ում և 5-ում, բենզինի ու հեղուկ գազի ներկրման ծավալներով նույնպես կախվածությունը հսկայական է, բայց պետք է հաշվի առնել, որ բենզինի ու հեղուկ գազի տեղափոխումն ու նոր մատակարարման ուղղությունների ձևավորումն անհամեմատ ավելի հեշտ է, քան բնական գազի դեպքում: Սա նշանակում է, որ ճգնաժամային իրավիճակում բենզինի ու հեղուկ գազի այլընտրանքային մատակարարումներ կազմակերպելն անհամեմատ ավելի հեշտ կլինի, քան բնական գազի դեպքում: Այստեղ պետք է նաև շեշտադրում անել ԵԱՏՄ անդամ չհանդիսացող երկրներից բենզինի ու հեղուկ գազի ներկրման ուղիներ և սցենարներ մշակելու անհրաժեշտության մասին: Այստեղ հետաքրքրական է, որ 2021 թվականին հեղուկ գազի ներկրումը մեծամասամբ տեղի է ունեցել Իրանից ու Իրաքից, սա նշանակում է, որ տեսականորեն հնարավոր է այլ երկրներից այս վառելիքի մրցունակ ներկրումը: Մինչ այդ, կարծում ենք, որ կառավարությունը պետք է կարգավորիչ միջոցներ ձեռնարկի բնական գազի գրավչությունը որպես տրանսպորտի վառելիք նվազեցնելու և բենզինինն ու հեղուկ գազինն ավելացնելու ուղղությամբ: Որպես ամենաարագ միջոց՝ կարելի է ձեռնարկել բենզինի ու հեղուկ գազի գնագոյացման գործընթացում ակցիզային հարկի վերացումը և այդ հարկային բեռի համաչափ ավելացումը բնական գազի՝ տրանսպորտային կարիքների համար օգտագործվող հատվածի վրա:

Համանման խնդիր կա նաև ջեռուցման ոլորտում (տե՛ս Աղյուսակ 5): Թեպետ վերջին տարիներին դիտարկվում է ջեռուցման ոլորտում բնական գազի պահանջարկի կայուն անկում, այդ տենդենցը նույնպես հարկավոր է խրախուսել, քանի որ բնական գազը դեռևս մնում է ջեռուցման գերակա աղբյուր:

Աղյուսակ 6. 2021/2022 թվականներին ջեռուցման վառելիքի հարաբերակցությունը:

ԹՎԱԿԱՆ	ԳԱԶ	ԷԼ. ԷՆԵՐԳԻԱ	ԱՅԼ
2021	72.7%	18.8%	8.5%
2022	67.3%	18.6%	14.1%
2023	66.4%	20.1%	13.5%

Կախվածությունները մեղմելու գործընթացում անհրաժեշտ է անդրադառնալ առկա ռեսուրսների արդյունավետ կառավարման ու օգտագործման խնդիրներին: Կորուստները էներգետիկայի ոլորտում օգուտ չբերող կախվածություններն են: Ուստի հարկավոր է հավելյալ ուշադրություն դարձնել էներգախնայողության (հատկապես ջեռուցման ոլորտում) ու կորուստների նվազեցման հարցերին: Սրանք, ըստ էության, մինիմալ ռիսկեր պահանջող տնային աշխատանքներն են:

Հարկ է նկատել, որ ըստ «Գազպրոմ Արմենիա» ընկերության պաշտոնական տվյալների՝ գազի կորուստները տարեցտարի ավելանում են (տե՛ս Գծագիր 7): Կարևոր կլիներ այս հարցում պետական վերահսկողության խստացումը և ընկերության հետ կորուստների նվազեցմանը միտված աշխատանքների կատարման վերաբերյալ համաձայնագրերի կնքումը:



Գծագիր 7. «Գազպրոմ Արմենիայի» կողմից հայտարարված գազի կորուստները 2021-2023 թթ:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

ՌԴ հիբրիդային հարձակումների համար պարարտ հող է ՀՀ բնակչության զգալի հատվածի՝ ռուսերենին տիրապետելը՝ որպես միակ օտար լեզու: Զարմանալի չէ, որ տարիներ շարունակ Ռուսաստանը փորձել է լայնորեն տարածել ռուսերենը ՀՀ տարածքում, որի համար կառավարական և հասարակական դաշտի մի շարք ֆինանսավորումների շրջանակներում մինչ օրս ՀՀ բոլոր հատվածներում գոյություն ունեն ռուսերենի ուսումնառության անվճար բազմաթիվ ծրագրեր: Բացի այդ, երկար տարիների պայքարից հետո ՌԴ-ն ՀՀ-ում ոչ միայն իրավունք ստացավ ունենալ ռուսական թեքումով դպրոցներ, այլև անկախության ամբողջ ժամանակաշրջանում թմբկահարվում է ռուսերենը՝ որպես երկրորդ պետական լեզու հաստատելու ցանկությունը: Նշված նպատակների համար կիրառվում են բազմաթիվ միջոցներ՝ պաշտոնական և, հատկապես, ոչ պաշտոնական խողովակներ, ՀՀ տարածքում ենթադրյալ գործող ՌԴ գործակալական ցանցի ներկայացուցիչների կոչեր և հայտարարություններ, գաղափարական ահաբեկչության տարրեր պարունակող գործողություններ (օրինակ՝ «արևմտյան լեզուների իմացությունը ուղղակի ճանապարհ է դեպի ԼԳՏԲ հանրույթ» կամ «արևմուտքից եկող գումարների միջոցով Հայաստանում ռուսերենը դուրս է մղվում դպրոցներից» տիպի մտքերի տարածումը), մեդիա դաշտի հագեցում ռուսական ազդեցության լրատվամիջոցներով և այլն: 2024 թ.-ին ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) աջակցությամբ ՀՀ-ում անցկացված «Հայաստանում խոսքի ազատության և մեդիայի սպառման հետազոտության» շրջանակներում անցկացված հարցման արդյունքում 1106 հարցվածների 88 տոկոսը տիրապետում է ռուսերենին, իսկ անգլերենին՝ միայն 33 տոկոսը:

Հարկ է նկատել, որ 3-րդ, 4-րդ և 5-րդ տեղում են ֆրանսերենը, գերմաներենը և թուրքերենը՝ համապատասխանաբար 4, 3 և 1 տոկոսային կետերով:

Այս սպառնալիքին դիմակայելու ակնհայտ ճանապարհն այլ օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացումն է, ինչպես նաև հանրակրթական մակարդակում ռուսերենի ու անգլերենի առնվազն հավասար մակարդակի ուսումնասիրությունը: Նշված ուղղությամբ որոշակի աշխատանքներ արդեն տարվում են: Սակայն, բացառությամբ անգլերենի, այլ լեզուներ ուսումնասիրելու լայն հնարավորությունները խիստ սահմանափակ են: Մեծ արդյունավետություն կարելի կլիներ ակնկալել, եթե պետական մակարդակով մարզերում աջակցություն տրամադրվեր անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, չինարեն, կորեերեն և պարսկերեն լեզուների տարածմանը: 44-օրյա պատերազմից հետո մի փոքր ավելի ակտիվ է թուրքերենի և ադրբեջաներենի դասավանդումը, սակայն սա ևս հասարակական նախաձեռնությունների շրջանակներում է: Անհրաժեշտ է նկատել նաև, որ 2024 թ.-ի նոր ուսումնական տարուց սկսած ՀՀ միջնակարգ դպրոցներում ռուսերենի դասավանդումն այլևս օրենքով չի համարվում գերակա այլ օտար լեզուների նկատմամբ, ինչը ևս մեկ, բայց խիստ սահմանափակ քայլ է այս սպառնալիքին դիմակայելու տեսանկյունից: Միևնույն ժամանակ, պայմանավորված դպրոցներում ռուսերեն լեզվի մասնագետների ավանդական առատությամբ և այլ լեզուներով մասնագետների սակավությամբ, իներցիայի ուժով, դեռևս հանրակրթական գրեթե բոլոր դպրոցներում ռուսերենի դասաժամերը շարունակում են մնալ ամենաշատը: Կրթական համակարգում իրավիճակը փոխելու, ինչպես և ընդհանրապես պետությունում լեզուների իմացությունը խրախուսելու համար անհրաժեշտ է մշակել և կիրառել օտար լեզուների՝ հատկապես անգլերենի, մասսայականացման ազգային ռազմավարություն:

Ռուսաստանն անչափ ակտիվ է հատկապես ՀՀ մեդիա դաշտում:

2024 թ.-ի տվյալներով՝ ՀՀ-ում ամենասպառվող ալիքների ցանկում ռուսական ալիքները 4-րդ տեղում են՝ 18 տոկոսային կետով: Որպես մեդիասպառման աղբյուր՝ ռուսական հեռուստաալիքները, այլ աղբյուրներին զուգահեռ, 47 տոկոս ընդգրկվածություն ունեն, իսկ ռուսական լրատվական կայքերը՝ 34 տոկոս: Եթե այս թվերին ավելացնենք նաև մի շարք լրատվականներ, որոնք հայկական ծագում ունեն, սակայն աշխատում են ռուսական կապիտալով և, փաստացի, կատարում են ռուսական պրոպագանդայի վերահեռարձակում, ակնհայտ է դառնում, որ հանրության մի զգալի հատված ենթակա է ուղիղ տեղեկատվական սպառնալիքի:

Ռուսական մեդիայի կողմից ՀՀ իշխանությունների նկատմամբ ակնհայտ հարձակումները վերջին տարիներին որոշակի արձագանքների պատճառ են հանդիսացել: Մասնավորապես՝ տեղի են ունեցել քննարկումներ, որոնց արդյունքում ռուսական կողմը պարտավորվել է վերացնել պայմանագրային խախտումները, ռուսական հայտնի հեռուստահաղորդումներից մի քանիսը ժամանակավորապես արգելափակվել են ՀՀ հանրային մուլտիպլեքսում և այլն:

Սակայն այլ դեպքերում, երբ հարձակումները քողարկված են և նպատակը ՀՀ բնակչության վրա հոգեբանական ազդեցություն գործելն է, որևէ համարժեք կամ անհամարժեք հակազդեցություն չկա:

Վիրտուալ սպառնալիքները չեն սահմանափակվում միայն ինստիտուցիոնալ հնարավորություններով: ՌԴ ազդեցության տարածման ևս մեկ հիմնարար գործիք է փորձագիտական դաշտում աշխատանքը: Օգտագործելով երբեմն գաղափարական կողմնորոշումներ, այլ դեպքերում՝ նյութական շահադրդում, ՀՀ տարբեր ոլորտի փորձագիտական դաշտի որոշ ներկայացուցիչների հավաքագրումը և սեփական կարիքների համար օգտագործումը դարձել է ՌԴ հիբրիդային գործողությունների առանցքային ուղղություններից մեկը: Նրանց շարքում են որակյալ մասնագետներ, գիտնականներ, նախկին պաշտոնյաներ և այլն: Ենթադրյալ հավաքագրվածների մի մասն այն մարդիկ են, որոնք խնդիրներ ունեն ՀՀ-ում՝ կապված հարստության ձեռքբերման կամ քաղաքական գործունեության ընթացքում հայտնաբերված անօրինականությունների հետ: Այս մարդիկ հաճախ ժամանակի ընթացքում հաստատվում են ՌԴ-ում, բայց չեն դադարեցնում աշխատել Հայաստանի ուղղությամբ: Այդ նպատակի համար օգտագործում են տեղեկատվահաղորդակցական միջոցներ, անձնական կապեր ու հարաբերություններ, կուտակած գումարների որոշ մաս և այլն: Փաստորեն, Ռուսաստանն այս ոլորտում տասնամյակների ընթացքում ձևավորել է սպառնալիքի կասկադային համակարգ:

Տեղեկատվական սպառնալիքների շարքին են դասվում նաև Հայաստանում գործող կապի և հեռահաղորդակցության ոլորտի կազմակերպությունները: Երկար տարիներ ՀՀ բջջային կապի բոլոր 3 օպերատորների գլխավոր բաժնետերերը ռուսական կազմակերպություններ էին՝ «Բիլայն-Արմենթել», «ՄՏՍ-Վիվա Սելլ» և Մեգաֆոն-Յուքոմ»: Վերջին տարիներին ռուսական բոլոր ընկերությունները հեռացան ՀՀ բջջային կապի ոլորտից, սակայն ինտերնետային մալուխային ծառայությունների մատուցման ոլորտում գործում է «Ռոստելեկոմ» ընկերությունը, որը տիրապետում է տվյալների ահռելի բազայի:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

Գլխավոր սպառնալիքներից է ՀՀ ինքնիշխանության, պետականության և տարածքային ամբողջականության նկատմամբ ուղղակի սպառնալիքը: Քանի որ Հայաստանն ու Ռուսաստանն ընդհանուր սահման չունեն, ուղիղ հարվածի սպառնալիքի հավանականությունը բավական փոքր է: Բայց գոյություն ունեն ֆիզիկական սպառնալիքի այլ տարատեսակներ, որոնք, հիբրիդային հարձակումների ենթատեքստում, մարտահրավեր են Հայաստանի համար: Դրանցից երկուսը ակնհայտորեն կիրառվում են Հայաստանի նկատմամբ:

Ֆիզիկական սպառնալիքի առաջին տեսակը ՀՀ սահմաններին ադրբեջանական սադրանքներն են, առավելագույն սպառնալիքը՝ Ադրբեջանի ինտերվենցիան: Այս դեպքում գործ ունենք այդ սադրանքների իրականացման հնարավոր տարբերակի՝ Ռուսաստան-Ադրբեջան շահերի համընկնման հետ: Ադրբեջանը տեսականորեն դեռ կարող է հրթիռներով և անօդաչու թռչող սարքերով հարվածներ հասցնել Հայաստանում տեղակայվող այն ռազմական տեխնիկային, որը ձեռք է բերվում վերջին տարիներին՝ ոչ Ռուսաստանից: Սա կբավարարի և՛ Ադրբեջանի, և՛ Ռուսաստանի շահերը: Շատ մեծ հավանականությամբ, եթե տեղի ունենա նման զարգացում, դա կարող է լինել որևէ խնդրի շուրջ ռուս-ադրբեջանական համաձայնության շրջանակներում:

Ադրբեջանը, Հայաստանի նկատմամբ ուժի կիրառման մշտական սպառնալիքից բացի, երբեմն նաև հարվածներ է հասցնում առանձին հատվածներում՝ ՀՀ տարածքում՝ սահմաններից ներս: Ամենամեծ նման սադրանքը տեղի է ունեցել 2022 թ.-ի սեպտեմբերի 13-14-ին: Հիմնական նպատակը՝ ուժի միջոցով դեպի Նախիջևան միջանցք բացել և հետագայում այն հանձնել Ռուսաստանի հատուկ ծառայությունների վերահսկողությանը, չի իրականացվել:

Հայ-ադրբեջանական սահման

Բայց այդ նպատակը դեռևս մնում է Մոսկվայի օրակարգում, ինչի մասին վկայում են տարբեր պաշտոնյաների և իշխանությունների հետ փոխկապված փորձագետների հայտարարությունները:

Հարկ է նշել, որ Եվրամիության դիտորդների ներկայությունը ՀՀ սահմաններին զգալիորեն սահմանափակել է Ադրբեջանի կողմից միակողմանի ագրեսիվ գործողությունների քողարկման հնարավորությունը: Ադրբեջանի ինտերվենցիան դեռևս սահմանափակվում է նաև մի քանի այլ գործոններով: Դրանցից առաջինը միջազգային իրավիճակն է և հիմնական ուժային կենտրոնների՝ Ֆրանսիայի, ԵՄ գերատեսչությունների, ԱՄՆ պետական դեպարտամենտի, ԻԻՀ-ի դիրքորոշումները: Մեկ այլ գործոն է նման փորձի արդյունքի անորոշությունը, քանի որ ՀՀ-ի կողմից սեփական տարածքը ինքնուրույն պաշտպանելու կարողությունները 2025 թ.-ի սկզբին զգալիորեն գերազանցում են նույն՝ 2022 թ.-ի հնարավորությունները: Բացի այդ, Ադրբեջան-Նախիջևան արտատարածքային կապի ուժային ճանապարհով հաստատման դեպքում, կանխատեսելի չեն միջազգային ավելի լայն արձագանքը և այդ ճանապարհի կիրառելիության հնարավոր սահմանափակումները:

ԵՄ դիտորդական առաքելությունը Հայաստանում

Գործոններից մեկն էլ Ադրբեջանի ներկա քաղաքականությունն է Հայաստանի նկատմամբ՝ ճնշումների միջոցով անընդհատ սպառնալից իրավիճակ գեներացնել, սակայն ուժային գործողության դեռևս չդիմել: Այնուամենայնիվ, Ռուսաստանի աջակցությամբ ադրբեջանական ինտերվենցիայի փորձը Սյունիքի մարզ դեռևս մնում է որպես կարևոր սպառնալիք ՀՀ անվտանգության համար: Այդ սպառնալիքն ահագնանում է նաև, քանի դեռ ՀՀ-Իրան սահմանին ռուսական սահմանապահ ծառայության փաստացի ժամանակավոր ներկայություն կա: Սա Հայաստանում ռուսական ռազմական ուժի տեղակայման առաջնային օջախ է, որը, որոշակի հանգամանքների դեպքում, կարող է վերածվել ՀՀ-ի նկատմամբ ուղղակի ֆիզիկական սպառնալիքի:

Ֆիզիկական սպառնալիքի մյուս տեսակը, որը Ռուսաստանը ևս կիրառում է, ներքին անկայունությունների հրահրումն է: Այս նպատակի համար օգտագործվում է տարիներ շարունակ պետության ներսում հյուսված գործակալական ցանցը: Հիբրիդային գործողությունների այս տեսակի գործիք Հայաստանում համարում են

նախկինում իշխանություն ունեցած քաղաքական ուժերի ներկայացուցիչներին, որոնք ընկալվում են որպես, այսպես կոչված, «5-րդ շարասյան» ներկայացուցիչներ: Երբեմն, վերջիններս, հանրության մոտ իրենց ցածր վստահության խնդիրներից խուսափելու նպատակով, փորձում են հանդես գալ այլ անձանց միջոցով: Ներքին անկայունություններ ստեղծելու մի քանի փորձեր որոշակի հաջողություններ ունեցել են: Տեղի են ունեցել ոստիկանների հետ բախումներ, որոնց արդյունքում վնասվածքներ են ստացել ոստիկաններ և քաղաքացիներ:

Ներքին անկայունություններ հրահրելու սպառնալիքը շարունակում է մնալ ֆիզիկական սպառնալիքների շարքում կարևորներից մեկը: Հայաստանի քաղաքական դաշտում Ռուսաստանը դեռևս տիրապետում է բավարար ռեսուրսների, որոնց միջոցով հնարավոր է անկայունություններ առաջացնել:

Բացի այդ, ՌԴ-ն ներքին անկայունությունների հրահրման և անորոշությունների ավելացման նպատակով օգտագործում է ևս մեկ միջոց՝ ՌԴ-ում բնակվող, ՌԴ կամ ՀՀ քաղաքացիություն ունեցող, գաղափարական կայուն պատրաստություն (ուղեղների լվացում) անցած էթնիկ հայերի զանգվածային փոխադրումներ Հայաստան: Հաճախ այդ մարդիկ գտնվում են ռուսական մեդիայի ուղղակի ազդեցության տակ, նրանք ունեն իրենց յուրահատուկ պատկերացումները Հայաստանի վերաբերյալ և ժամանում են՝ վառ արտահայտված հակահիշխանական, շատ դեպքերում՝ հակապետական դիրքորոշում ունենալով: Նման մարդկանց նույնիսկ փոքր թիվը կարող է ներքին անորոշությունների և քաոսային իրավիճակների աճի հանգեցնել:

Ֆիզիկական սպառնալիքների ևս մեկ ուղղություն է հայ-թուրքական, հայ-իրանական սահմաններին ռուսական սահմանապահ ծառայությունների ժամանակավոր ներկայությունը:

Թուրքիայի հետ սահմանին ռուսական ժամանակավոր ներկայությունը ևս մտահոգություններ է առաջացնում: Թեև Մարգարայի

անցակետում միայն ՀՀ հատուկ ծառայություններն են գտնվում, սակայն քանի որ սահմանի բացումը չի համապատասխանում Ռուսաստանի աշխարհաքաղաքական և տարածաշրջանային շահերին, բացառված չէ, որ հայ-թուրքական սահմանի հնարավոր բացման կամ նախապատրաստական փուլերում սահմանի այլ հատվածներում կարող են տեղի ունենալ սադրանքներ: Այդ սադրանքների թիրախում կարող է լինել գործընթացի հաջող ելքի վերաբերյալ վատատեսական սպասումների, հասարակական բացասական արձագանքի, կողմերի միջև անվստահության մթնոլորտի ձևավորումը: Այս խնդրի կարգավորման հարցում բացառիկ կարևորություն ունի 2025 թ.-ի հունվարի 14-ին Հայաստանի և ԱՄՆ-ի միջև կնքված ռազմավարական գործընկերության հանձնաժողովի կանոնադրությունը, որի շրջանակներում ամերիկյան կողմի օգնությամբ ՀՀ սահմանապահ ծառայության կարողունակությունների բարելավման պայմանավորվածություն կա: Հնարավորինս սեղմ ժամկետներում հայ-թուրքական և հայ-իրանական սահմանների ամբողջական պաշտպանությունն ու վերահսկողությունը բացառապես ՀՀ սահմանապահ ծառայության ուժերով իրականացնելը բխում է Հայաստանի երկարաժամկետ շահերից:

Թեև նշեցինք, որ ուղիղ հարվածի սպառնալիքի հավանականությունը փոքր է, անհրաժեշտ է հաշվի առնել, որ եթե Մոսկվայում իրավիճակը գնահատվի ծայրահեղ անբարենպաստ, հնարավոր է ՌԴ-ն համարձակվի անմիջականորեն ուժ կիրառել՝ ուղիղ հարվածի համար օգտագործել Հայաստանում ժամանակավորապես տեղակայված ռուսական 102-րդ ռազմական բազայի ուժերը: Այնուամենայնիվ, մեր կարծիքով, այս զարգացման հավանականությունը դեռևս փոքր է: Նման եզրակացության կարելի է հանգել՝ հաշվի առնելով, որ Հայաստանում ռուսական զինված ուժերը չունեն ոչ լայն հանրային աջակցություն, ոչ էլ թիկունքային ապահովում, ինչպես, օրինակ, Սևաստոպոլում, որտեղ Ղրիմի բռնակցման ընթացքում ՌԴ ռազմական ներկայությունը կարևոր դեր խաղաց:

ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

Ռազմաքաղաքական գլխավոր սպառնալիքը ՀՀ զինված ուժերի կախվածությունն է Ռուսաստանից: Այս առումով, հատկանշական է Հայաստանի բանակում կադրերի՝ հիմնականում միայն ռուսերենին տիրապետելը, ռուսական դպրոցի ներկայացուցիչ լինելը, ռուսական փափուկ մեծ ազդեցությունը, ռուսական զենք-զինամթերքի ու ռազմական տեխնոլոգիաների դեռևս մեծաքանակ առկայությունը:

Ռուսաստանի կողմից ՀՀ ՋՈՒ մատակարարումների ընդհատումներն այն գործողություններն են, որոնք ցանկացած պահի կարող են խաթարել ՀՀ զինված ուժերի կողմից իրենց գործառույթների իրականացման արդյունավետությունը:

Տարիներ շարունակ ՀՀ զինված ուժերի միջին և բարձրագույն սպայական անձնակազմը վերապատրաստվում էր Ռուսաստանում: Հետևաբար՝ զինված ուժերում կարիերայի աճ ապահովելու համար ռուսերենին տիրապետելը բավարար էր, իսկ այլ լեզուների նկատմամբ հետաքրքրությունը սուբյեկտիվ էր: Այս իրողությունը հանգեցրել է մի իրավիճակի, երբ ՀՀ բանակում նորագույն տեխնոլոգիաներին հասանելիությունը միջին և բարձր մակարդակի սպայակազմի համար կապվում է ռուսական համարժեքների կամ ռուսերեն գրականության հասանելիության հետ: Հետևաբար՝ ռուսական ազդեցության ևս մեկ, հիմնարար գործիք են ՀՀ բանակի անձնակազմի հետ ուղղակի կամ միջնորդավորված փոխհարաբերությունները: Բանակում անգլերենի համընդհանուր ուսուցման, նոր պաշտոնի նշանակելիս անգլերենի իմացության թեստավորման, միջին և բարձրագույն սպայական անձնակազմի վերապատրաստումը անգլիալեզու ուսումնական հաստատություններում կազմակերպելու անհրաժեշտությունը ռուսական ազդեցության նվազման կարևորագույն գործընթաց կարող է լինել:

ՀՀ ԶՈՒ

Թեև ռազմական տեխնիկայի ձեռքբերման հիմնական ուղղությունները փոխվել են, սակայն նախկին ժամանակաշրջաններից մնացած մեծածավալ տեխնիկայի առկայությունը հնարավորություն է տալիս Ռուսաստանին՝ սպառազինության սպասարկման, մարտական պայմաններում դրանց գործարկման, զինամթերքի և այլ բաղադրիչների մատակարարման և հարակից հարցերի միջոցով ազդեցության լրջագույն լծակներ պահպանել: Այս խնդրի կառավարման գլխավոր ուղղությունը բանակի վերափոխման տեմպերի արագացումն է, որի շրջանակներում անհրաժեշտ է այլ չափանիշներին համապատասխան սպառազինության ձեռքբերումը համադրել այդ սպառազինությունը սպասարկող անձնակազմի կարողունակությունների շարունակական բարելավման հետ: Այս նպատակով կարևոր է միջազգային համագործակցային մեխանիզմների ընդլայնումը:

Ռազմաքաղաքական սպառնալիք է նաև հայ-ռուսական համատեղ զորամիավորումների գոյությունը (օրինակ՝ ՀՕՊ համատեղ

զորքեր): Հայտնի է, որ վերջին տարիներին առնվազն մեկ անգամ նշված զորամիավորումը փաստացի չի կատարել ՀՀ ՊՆ-ի կողմից իր առջև դրված մարտական խնդիրը՝ հիմնվելով Մոսկվայից հրամանի բացակայության վրա: Նման իրավիճակներն էականորեն ազդում են բանակի մարտական պատրաստվածության, ռազմական գործողությունների ծրագրման ու իրականացման արդյունավետության վրա: Ընդ որում, ՀՀ զինված ուժերը մեծ դժվարությունների կարող են հանդիպել, եթե փորձ կատարվի համատեղ զորքերի պայմանավորվածություններից դուրս գալու: Այդ դժվարություններն ունեն մի քանի պատճառներ: Առաջին հերթին խնդիրը տեխնիկական է՝ համատեղ ուժերի ձևավորման ու գործարկման ժամանակահատվածում ՀՀ զինված ուժերի տվյալ ստորաբաժանումների տեխնիկական համալրվածությունը և գործառնությունների պլանավորումն ինտեգրվել և համատեղվել են ռուսական ստորաբաժանումների հետ, ինչը նշանակում է, որ առանձնացված գործելու համար անհրաժեշտ է լինելու ինչ-որ կետից, որոշակի ժամանակում նորից սկսել զինտեխնիկայով համալրվել և պլանավորումներ մշակել: Բացի այդ, տվյալ ստորաբաժանումների ռազմական տեխնիկան բացառապես ռուսական է, ինչը նշանակում է, որ դրանց սպասարկման և գործարկման համար կրկին կարիք է առաջանալու դիմելու ռուսական կողմին՝ արձագանքի անորոշ կանխատեսմամբ, կամ ամբողջապես վերանայել տվյալ ստորաբաժանման մարտական հագեցվածության պլանը: Պակաս կարևոր գործոն չէ նաև համատեղ զորամիավորումների ձևավորման ու գործարկման պայմանագրերի միակողմանի խախտումը, ինչը կարող է բերել տարբեր, այդ թվում՝ ֆինանսական հետևանքների:

Այս ամենով հանդերձ՝ նշված ստորաբաժանումներն անհրաժեշտ է վերացնել, թեկուզ և երկարաժամկետ կտրվածքում և քայլերի հաջորդական իրացմամբ:

Այս սպառնալիքի չեզոքացման որոշակի գործընթացներ արդեն տեղի են ունենում: ՀՀ զինված ուժերի կողմից ձեռք բերվող նոր զինտեխնիկան, որը ռուսական չէ, հիմնականում չի ներառվում համատեղ զորամիավորումներում, այլև ձևավորվում են տվյալ զորքերի նոր՝ բացառապես ՀՀ իրավասության տակ գտնվող զորամիավորումներ: Կախվածությունը չեզոքացնելու լավագույն տարբերակը, կարծում ենք, բոլոր համատեղ զորամիավորումներին զուգահեռ նոր զորամիավորումների ձևավորումն է, ինչը ժամանակի ընթացքում ավելորդ և ՀՀ բանակի համար անպիտան կդարձնի համատեղ զորամիավորումները: Այս դեպքում այլևս կարիք չի լինի պայմանագրերը միակողմանիորեն խզելու, այլ դրանք կարող են լուծարվել, քանի որ որևէ իրական կամ թաքնահարույց գործառույթ իրականացնելու հնարավորություն չի լինի:

ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

Զուգահեռաբար, գոյություն ունի ուղիղ հարվածի տրամաբանության մեջ դիտարկվող մեկ այլ սպառնալիք՝ ՀՀ ղեկավարության կամ անձամբ առաջին դեմքի ֆիզիկական ոչնչացումը: ՀՀ վերջին տասնամյակների պատմության մեջ առաջին դեմքերի նկատմամբ ահաբեկչության հայտնի օրինակը (1999 թ. հոկտեմբերի 27) հիմքեր է տալիս ենթադրելու, որ կարող են լինել իրավիճակներ, որոնց դեպքում ՀՀ իշխանությունների կողմից վարվող քաղաքականությունը կգնահատվի որպես սպառնալիք, իսկ որպես այդ սպառնալիքի վերացման ամենակարճ ուղի՝ կընտրվի որոշում կայացնողների ֆիզիկական ոչնչացումը: ՌԴ-ի դեպքում այս տարբերակը որոշակիորեն

ենթադրելի է՝ հաշվի առնելով Ալեքսեյ Նավալնու, Եվգենի Պրիգոժինի, Սերգեյ Սկրիպալի, Բորիս Նեմցովի և բազմաթիվ այլ՝ ՌԴ իշխանությունների քաղաքականությունը քննադատող դերակատարների հետ պատահած դեպքերը, ինչպես նաև վերջին տարիներին Հայաստանում պարբերաբար բացահայտվող զինված խմբավորումները, հատկապես՝ դրանցից վերջինը, որը, համապատասխան ԱԱԾ-ի տարածած հաղորդագրության, իր ներդաշնակեցումն անցել է ՌԴ-ի Ռոստով քաղաքում (ի դեպ, հենց այդ քաղաքում է գտնվում ՌԴ ռազմական հետախուզության հատուկ նշանակության ստորաբաժանման ճամբարը: Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ նույն ճամբարում էին նախապատրաստվել նաև Էդուարդ Շևարդնաձեի վրա 1998 թ.-ին իրականացրած մահափորձի մասնակիցները): Նշված մարտահրավերին համարժեք պատասխան տալու հնարավորությունները կապվում են հետախուզական, հակահետախուզական և իրավական այլ աշխատանքների արդյունավետության շարունակական աճի ապահովման հետ: Այս գործընթացը պետք է ուղեկցվի հատկապես կարևոր պաշտոնյաների անվտանգության ապահովման համակարգի զարգացմամբ, ինչի նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել և փոխառել զարգացած պետությունների տեխնոլոգիական հնարավորությունները: Կարևոր է նաև Հայաստանում ձևավորել (Night watch protocol) գործադիր իշխանության իրավունքի ուժով փոխանցելիության առնվազն առաջին 15 հոգուց բաղկացած ցուցակ, որը որոշակի չափով անիմաստ կդարձնի առանձին անձանց սպանությունները: Սա մենք դիտարկում ենք ՀՀ իշխանությունների ֆիզիկական անվտանգության գլխավոր երաշխիքը, որի պարագայում, ի տարբերություն 1999 թ. հոկտեմբերի 27-ի առանձին անձանց սպանության, չի բերի քաղաքական վեկտորի փոփոխությունների:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

Ռուսաստանի կողմից ժողովրդագրական շահարկումների միջոցով ազդեցությունն օգտագործվում է ամբողջ հետխորհրդային աշխարհագրական տարածությունում: Տարիներ շարունակ, Ռուսաստանը, ժողովրդագրական գործոնի միջոցով, հիմքեր էր ձևավորում Ուկրաինայում իր ազդեցությունն ավելացնելու համար: Զարմանալի չէ, որ 2022 թ.-ի հունվար-փետրվար ամիսներին, մինչև Ուկրաինա ներխուժումը, Ռուսաստանի որոշ շրջանակներ կարծում էին, թե Ուկրաինայում ունեն մեծ թվով համախոհներ (իրենց կարծիքով՝ ՌԴ անձնագիր ունեցողներն իրենց համախոհներն էին), որոնք ծաղիկներով են դիմավորելու ռուսական զորքերին:

Ռուսաստանի ազդեցությունը ժողովրդագրական առումով ունի մի քանի ուղղություն: Առաջին ուղղությունը ՀՀ-ի անկախացման հետ զուգընթաց սկսված՝ աշխատանքային միգրացիայի երևույթն է: Տարեկան տասնյակ հազարավոր ՀՀ քաղաքացիներ են մեկնում ՌԴ՝ սեզոնային և այլ տիպի աշխատանք կատարելու նպատակով: Նրանց աշխատանքի արդյունքում ձևավորված գումարների մի զգալի մասը, որպես միջազգային փոխանցումներ, ուղարկվում է ՀՀ-ում գտնվող հարազատներին: Այդ գումարների շրջանառությունը մշտապես ներառվում է ՀՀ ընդհանուր տնտեսական շրջանառության մեջ: Վերջին տարիներին, պայմանավորված տարբեր իրողություններով, ՀՀ-ից աշխատանքային միգրացիան դեպի ՌԴ նվազել է: Միաժամանակ, ՌԴ-ից ՀՀ դրամական փոխանցումները 2022 թ.-ին կտրուկ աճել են՝ կազմելով 1396.9 մլն ԱՄՆ դոլար, ինչը մոտ 89 տոկոսով ավելի է 2021 թ.-ի ցուցանիշից: Սակայն 2023 թ.-ին փոխանցումների ծավալը նորից նվազել է՝ կազմելով «նորմալ» համարվող արժեք՝ 734.7 մլն ԱՄՆ դոլար: Ըստ ամենայնի, 2022 թ.-ին

արձանագրված աճը կապված է պատերազմի հետևանքով ՌԴ-ից Հայաստան ներգաղթածներին կատարվող փոխանցումներով: Այս ցուցանիշները ցույց են տալիս, որ ՀՀ ներքին համախառն ծավալում ՌԴ-ից փոխանցումների ազդեցությունն իրականում մեծ չէ: Բացի այդ, փոխանցումների ծավալը հստակորեն նվազում է ՀՆԱ կառուցվածքում: Եթե 2013-2014 թթ.-ին այն կազմել է մոտ 18 տոկոս, ապա 2023 թ.-ի տվյալներով ՀՀ ՀՆԱ կառուցվածքում արտերկրյա մասնավոր փոխանցումները կազմել են ընդամենը 7.2 տոկոս: Այնուամենայնիվ, ՀՀ-ի նկատմամբ ճնշում գործադրելու համար Ռուսաստանը հաճախ օգտագործում է նաև այս գործոնը: Մասնավորապես՝ 2024 թ. մարտի 26-ին ՌԴ նախագահի խոսնակ Դ. Պեսկովը հայտարարում էր «տարեկան մի քանի միլիարդ դոլար Հայաստան փոխանցումների» մասին:

Ժողովրդագրական գործիքների միջոցով ազդեցություն գործելու հաջորդ ուղղությունը Հայաստանում ՌԴ անձնագիր ունեցողների քանակի ավելացումն է: 2006 թ.-ից սկսած Ռուսաստանն իրականացնում է «հայրենակիցների վերադարձի» ծրագիրը, որի շրջանակներում նախկին ԽՍՀՄ անձնագիր կամ ծննդյան վկայական ունեցողներն իրավունք ունեին պարզեցված կարգով ստանալու ռուսական անձնագիր: 2023 թ.-ին նոր փոփոխություն կատարվեց պարզեցված կարգով ՌԴ անձնագիր ստանալու մասին օրենքում: Այժմ պարզեցված կարգով ՌԴ անձնագիր կարող են ստանալ նաև այն մարդիկ, որոնք նախկին ԽՍՀՄ տարածքում մշտապես ապրող հարազատներ ունեն: Որպես ծրագրի հիմնական նպատակ՝ նշվում էր «հայրենադարձությունը», իսկ 2006-2018 թթ.-ին այս ծրագրով Ռուսաստանում հաստատվել է մոտ 826,000 մարդ:

Սակայն անձնագիր ստացողների մի ստվար զանգված կրկին հեռացել է ՌԴ-ից՝ վերադառնալով մեկնման երկրներ, բայց պահպանելով ՌԴ անձնագիրը՝ հետագայում բարձր թոշակներ կամ այլ առավելություններ ունենալու համար: ՀՀ-ում 2012-2017 թթ.-ին

քաղաքացիությունից հրաժարվել է 16,436 մարդ, որոնցից գրեթե բոլորը շարունակել են ապրել Հայաստանում, սակայն ստացել են ՌԴ քաղաքացիություն: Ընդ որում՝ տարեցտարի ՌԴ քաղաքացիություն ձեռք բերող հայաստանցիների քանակն ավելացել է:

Պատկերը չի փոխվել նաև 2018 թ.-ից հետո: 2018-2024 թթ.-ին, զինվորական ծառայությունից խուսափելու նպատակով, ՀՀ քաղաքացիությունից հրաժարվել է 11,830 արական սեռի քաղաքացի, որոնց ճնշող մեծամասնությունը կրկին ընդունել է ՌԴ քաղաքացիություն:



Գծագիր 8. 2021-2024 թթ. ՀՀ-ից ՌԴ աշխատանքային միգրանտների մեկնման դինամիկան:

Թեև կա անհանգստություն՝ կապված ռուս-ուկրաինական պատերազմին ներգրավման հետ, սակայն քանի որ նրանք գրեթե բոլորը շարունակում են ապրել Հայաստանում, այդ ռիսկը գնահատվում է շատ փոքր: Բացի այդ, Հայաստան ժամանող ՌԴ քաղաքացիներից շատերը ևս ազգությամբ հայեր են և այդ հիմքով ստանում են Հայաստանում մշտական կացության իրավունք կամ քաղաքացիություն:

Մասնավորապես՝ 2023 թ.-ին Հայաստանում կացության իրավունք ստացած 2137 ՌԴ քաղաքացիներից 1177-ը այն ստացել են ազգությամբ հայ լինելու հիմքով:

Հայաստանի բնակիչների՝ ՌԴ անձնագրեր ունենալն ազդեցության ևս մեկ միջոց է: Նրանցից շատերն ակտիվորեն մասնակցում են ՀՀ ներքին քաղաքական կյանքին: Հաշվի առնելով Ռուսաստանից նրանց ֆինանսական, սոցիալական և այլ տիպի կախվածությունը՝ այս հատվածը հակված է տեսնելու Ռուսաստանի ազդեցության ընդլայնում և առաջ տանելու ՌԴ-ի շահերը, ինչը լայնորեն օգտագործվում է ՌԴ-ի կողմից:

Ժողովրդագրական սպառնալիքների մեկ այլ ուղղություն է Ռուսաստանի քաղաքացիների ներգաղթը ՀՀ: Այն հատկապես մեծ ծավալների հասավ 2022 թ.-ի աշնանը՝ Ռուսաստանում մասնակի զորահավաք հայտարարելու հետևանքով: Եթե 2021 թ.-ին ՀՀ ժամանած և մեկնած ՌԴ քաղաքացիների թվի տարբերությունը կազմել է 16,120 մարդ, ապա 2022 թ.-ին՝ 75,149 մարդ: Թեև հետագայում այս թիվը նվազեց, սակայն ՌԴ քաղաքացիների ներգաղթը որոշակի տեմպերով շարունակվում է մինչ այժմ: Մասնավորապես՝ 2024 թ. հունվար-օգոստոս ամիսներին Հայաստան ժամանած և Հայաստանից մեկնած ՌԴ քաղաքացիների թվի տարբերությունը կազմել է 18,797 մարդ:

Կարելի է նկատել, որ ՀՀ-ում ՌԴ քաղաքացիների թիվը կայուն աճ է գրանցում: Մի կողմից հասկանալի է, որ ներգաղթողների շարքում քիչ չեն որակյալ մասնագետները, որոնք հեռանում են Ռուսաստանից բռնաճնշումների, ազատությունից զրկվելու վտանգի, Ուկրաինայի դեմ պատերազմին զորակոչվելու պատճառներով: Սակայն մյուս կողմից Հայաստանում ՌԴ ազդեցության սպառնալիքներից մեկը կարող է լինել նման մարդկանց շարքում հատուկ ծառայությունների ներկայացուցիչների ընդգրկումը, որոնք, քողարկվելով գործարարի կամ աշխատավորի անվան տակ, կարող

են անհրաժեշտ պահին հրահրել անկարգություններ, մասնակցել դրանց, փորձել այլ կերպ ազդեցություն գործել ՀՀ ներքին քաղաքական գործընթացների վրա:

Հայաստանում բնակություն հաստատած ՌԴ քաղաքացիների ազդեցության մարտահրավերը խնդրահարույց է հատկապես երկարաժամկետ առումով, քանի որ նրանց մի որոշակի հատվածը համալրում է բիզնես միջավայրը, որի միջոցով առարկայական մասնակցություն է սկսում ունենալ ՀՀ ներքին տնտեսական կյանքին: ՌԴ-ում բնակվող ազգությամբ հայերի տեղափոխման օրինակով նշված մարդիկ կարող են հատուկ նպատակով գործուղվել Հայաստան, տնտեսական և անվտանգային երկարաժամկետ, քայքայիչ ծրագրեր իրականացնել, իսկ անորոշությունների դեպքում՝ գործել համաձայն Ռուսաստանից ստացվող հրահանգների: Օրինակ՝ ամրակազմ տղամարդիկ կարող են փողոցային անկարգությունների, իրավապահ համակարգի դեմ անօրինական ուժային գործողությունների մասնակցել:

Սպառնալիքների վերջին խմբին դիմակայելու խնդիրը վերաբերվում է ՀՀ հատուկ ծառայությունների կարողունակությունների

շարունակական բարելավմանը: Այս նպատակի իրականացումը, իր հերթին, ենթադրում է նաև միջազգային գործընկերների հետ սերտ և բեղմնավոր աշխատանք: Մասնավորապես՝ այս հարցում կարելի է ակտիվորեն օգտագործել 2025 թ. հունվարի 14-ին ՀՀ-ի և ԱՄՆ-ի միջև կնքված ռազմավարական գործընկերության կանոնադրությունը: Այն, ի թիվս այլ հարցերի, նախատեսում է նաև ամերիկյան կողմի աջակցություն ՀՀ համապատասխան ծառայությունների զարգացմանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ավելացնել տնտեսության դիվերսիֆիկացման և այլ շուկաների հետ աշխատանքի ինտենսիվացման տեմպերը, խթանել տեղական արտադրանքի որակական չափանիշների շարունակական աճը՝ դարձնելով սա Հայաստանի արտաքին քաղաքականության առաջին բացարձակ առաջնահերթությունը:

2. Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը և Հայաստան-Թուրքիա սահմանի բացումը դարձնել Հայաստանի արտաքին քաղաքականության երկրորդ բացարձակ առաջնահերթությունը, իսկ հնարավոր բացման դեպքում թուրքական շուկան օգտագործել ներմուծման և արտահանման, ինչպես նաև տարանցման խթանման համար:

3. Նոր ուղղություններով արտահանումը խթանելու նպատակով՝ շուկայում հարուցել որակական էական բարեփոխումներ: Այս հարցում կատարել պետական ռազմավարական պլանավորում և հասարակության համախմբում՝ նպատակի հստակ նախանշման և պլանավորված քայլերի իրականացման վերաբերյալ վերջինիս իրազեկման միջոցով (ռազմավարական հաղորդակցությունների որակի լավարկում), ստանդարտների մշակում և դրանց իրացման ճանապարհային քարտեզների մշակում:

4. Դիտարկել և անհրաժեշտության դեպքում օգտագործելու համար նախապատրաստել հացահատիկների ներկրման ուղղությունների դիվերսիֆիկացիան՝ Ուկրաինա, Ղազախստան, Հնդկաստան, Իրան: Կատարել նաև սցենարային մշակում Թուրքիայից կամ Թուրքիայի տարածքով հնարավոր ներմուծման մեխանիզմներ օգտագործելու վերաբերյալ:

5. Դիտարկել և անհրաժեշտության դեպքում օգտագործելու համար նախապատրաստել շաքարի ներմուծման այլընտրանքային ուղղություններ: Այդ ուղղությունները կարող են ներառել Իրանը,

Բրազիլիան, ԱՄԷ-ն, Հնդկաստանը, Բելգիան, Չինաստանը և այլն:

6. Թռչնի մսի պահանջարկի բավարարման նկատառումներով՝ խթանել սելեկցիոն աշխատանքը՝ միտված ֆուրաժային հացահատիկի լավ հարմարեցված սորտեր ու հիբրիդներ ստանալուն:

7. 3-րդ երկրների շուկաներից ներմուծման միջոցով Հայաստանում թռչնի մսի պահանջարկի բավարարման հարցը ներառել և դիտարկել որպես դրական զարգացում՝ ԵԱՏՄ անդամության դադարեցման համատեքստում:

8. Խթանել սոյայի աճեցման և սոյայի յուղի արտադրության հնարավորությունները:

9. «Հարավ-Կովկասյան երկաթուղու» խնդիրները հավանաբար այն ոլորտն են, որտեղ գոյություն ունի այլընտրանքային լուծումների խիստ անբավարարություն: Սակայն «Խաղաղության խաչմերուկ» նախագծի հնարավոր իրականացումը կարող է հետաքրքրություն առաջացնել ՀՀ երկաթուղային ցանցի նկատմամբ: Այս ուղղությամբ արդյունավետ կլիներ ՀՀ երկաթուղային ցանցի վերականգնման վերաբերյալ միջազգային լոբբինգը, որը կենթադրի հայկական երկաթուղու կառավարման կարճաժամկետ փոխանցում որևէ միջազգային մասնավոր ընկերության: Զուգահեռաբար՝ անհրաժեշտություն կա պետական հովանավորությամբ տեղական օպերատորի ձևավորում, որի անձնակազմի պատրաստումը, տեխնոլոգիական միջոցներով հագեցվածությունը և այլ անհրաժեշտ միջոցառումների իրականացումը կարելի է կատարել պետական մասնակցությամբ՝ հետագայում փոխհատուցման որևէ մեխանիզմի շուրջ համաձայնությամբ: Միջազգային գործընկերների հետաքրքրության խթանման հիմնական ենթատեքստը կարող է լինել հայկական երկաթուղու՝ «Միջին միջանցք» նախագծի ենթակառուցվածքային մաս հանդիսանալը:

10. Ռուսաստանի Դաշնության հետ կնքված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետություն բնական

գազի, նավթամթերքների և չմշակված բնական ալմաստների առաքման ոլորտում համագործակցության մասին» 2013 թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագիրը, ըստ էության, մենաշնորհային դիրք է ապահովում «Գազպրոմ» ընկերության համար, հարկավոր է մշակել գործողությունների պլան, որը կփոխի այս իրավիճակը և հնարավորություն կստեղծի Իրանից, ծոցի երկրներից և այլ հնարավոր աղբյուրներից բնական գազի մատակարարում ապահովել:

11. Հաշվարկել խաղաղության պայմանագրի կնքման ու հարաբերությունների կարգավորման սցենարի դեպքում՝ Ադրբեջանից կամ Ադրբեջանի տարածքով Միջին Ասիայից բնական գազի ներկրման հնարավորությունը և գնագոյացումը, որպես այլընտրանքային վառելիքի մատակարարող՝ Ադրբեջանի նյութական ու քաղաքական կարողությունը:

12. Հաշվի առնելով, որ բենզինն ու հեղուկ գազը անհամեմատ ավելի հեշտ կազմակերպվող ու վերանայվող լոգիստիկա ենթադրող վառելիք են, կարծում ենք, որ անհրաժեշտ է դիտարկել պետության կողմից հատուկ մեխանիզմների կիրառումը՝ ուղղված տրանսպորտի համար վառելիքի այս տեսակն առավել գրավիչ դարձնելուն: Օրինակ, նման գործիք կարող է հանդիսանալ բենզինի վրա տարածվող ակցիզային հարկատեսակի վերացումը:

13. Խթանել բնակարանային ֆոնդի և հիմնարկությունների բնական գազով ջեռուցման համակարգից անցումը ջեռուցման կազմակերպման այլ մեթոդների՝ էլեկտրական կաթսաներ, արևային կաթսաներ և այլն: Բարելավել և կտրուկ ավելացնել բնակչության համար կառավարության կողմից իրականացվող՝ կանաչ էներգիայի ծրագրերի հասանելիությունը, ձևավորել գրավչության նոր հնարավորություններ և տեղեկատվական արշավներ:

14. Էներգախնայողությունը Հայաստանում պետք է լինի ոլորտային քաղաքականության բացարձակ առաջնահերթությունը: Հայաստանում ինչքան ավելի քիչ ծախսվի ածխաջրածնային էներգիա,

այնքան բացարձակ թվերի առումով ավելի քիչ կլինի Հայաստանի արտաքին կախվածությունը: Այս առումով նաև կարևոր է էներգախնայողության ոլորտում պետական ծախսերի ու ծրագրերի արդյունավետացումը և մատուցվող ծառայությունների շուրջ հանրային արշավների իրականացումը:

15. Ավանդապես արևային էներգետիկայի գլխավոր խնդիրն է համարվում դրա երաշխավորված հզորության բացակայությունը: Սակայն հատկապես լեռնային պայմաններում հնարավոր են հիդրոկուլմինատիվ լուծումներ:

16. Հայ-ռուսական հարաբերությունների շեշտակի էսկալացիայի դեպքում անհրաժեշտ է ունենալ հստակ մշակված սցենար «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետություն բնական գազի, նավթամթերքների և չմշակված բնական ալմաստների առաքման ոլորտում համագործակցության մասին» 2013 թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրի լուծարման վերաբերյալ: Անհրաժեշտ է ՀԷՑ, «Գազպրոմ Արմենիա», Հրազդանի ՋԷԿ օբյեկտները հայկական վերահսկողության տակ վերադարձնելու ուղղությամբ սցենարներ մշակել: Մեր կարծիքով լավագույն լուծումները կլինեն մասնավորի կառավարմանը հանձնված պետական սեփականության կամ ՀՀ տարածքում գործող իրավաբանական ու ֆիզիկական անձանց սեփականության մոդելները:

17. Անհրաժեշտ է Հայկական ատոմակայանի կոնցեսիոն կառավարման պայմանագրի վերանայում, այլընտրանքային վառելիքի օգտագործման համար անհրաժեշտ աշխատանքների պլանավորում, նոր ատոմակայանների կառուցման աշխատանքների փութացում:

18. Կարևոր նշանակություն ունի բանակի վերափոխման տեմպերի արագացումը, որի շրջանակներում անհրաժեշտ է նոր սպառազինության ձեռքբերմանը զուգահեռ՝ այդ սպառազինությունը սպասարկող անձնակազմի կարողունակությունների շարունակական

բարելավում ապահովել: Այս նպատակով կարևոր է միջազգային համագործակցային մեխանիզմների ընդլայնումը:

19. ՀՀ-ԻԻՀ և ՀՀ-ԹՀ սահմաններին ռուսական ներկայության հնարավոր բացասական հետևանքները կառավարելու նկատառումներով պետք է խթանել և զարգացնել 2025 թ. հունվարի 14-ին Հայաստանի և ԱՄՆ-ի միջև կնքված ռազմավարական գործընկերության հանձնաժողովի կանոնադրության շրջանակներում ամերիկյան կողմի օգնությամբ ՀՀ սահմանապահ ծառայության կարողունակությունների բարելավման գործընթացը:

20. Անհրաժեշտություն կա պետական մակարդակով ՀՀ մարզերում աջակցություն տրամադրել անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, չինարեն, կորեերեն, պարսկերեն, ինչպես նաև թուրքերեն և ադրբեջաներեն լեզուների տարածմանը: Սակայն գլոբալ առումով լեզվական խնդրի լուծման ճանապարհը «ՀՀ-ում անգլերենի մասսայականացման ազգային ռազմավարության» մշակումն ու ընդունումն է:

21. Անհրաժեշտ է օր առաջ ներդնել և ընդլայնել բանակում անգլերենի ուսուցման գործընթացները, ներառել այդ գործընթացներում զինված ուժերի ամբողջ անձնակազմը, մշակել բանակում պաշտոնների նշանակման և հետագա բարձրացման գործընթացում անգլերենի պարտադիր թեստավորման համակարգ:

22. Հայ-ռուսական համատեղ զորամիավորումներից բխող կախվածությունը հաղթահարելու համար պետք է բոլոր նման մասնագիտական ուղղություններով ձևավորել նոր՝ բացառապես ՀՀ իրավասության տակ գտնվող զորամիավորումներ, որի հետևանքով համատեղ զորամիավորումները ժամանակի ընթացքում ավելորդ կդառնան և դուրս կգան ՀՀ բանակի գործառման համակարգից:

23. Անհրաժեշտ է ապահովել հետախուզական, հակահետախուզական և իրավապահ մարմինների աշխատանքների արդյունավետության շարունակական աճը: Այս գործընթացը պետք է ուղեկցվի

հատկապես կարևոր պաշտոնյաների անվտանգության ապահովման համակարգի զարգացմամբ, ինչի նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել և փոխառել զարգացած պետությունների տեխնոլոգիական հնարավորությունները: Կարևոր է նաև Հայաստանում ձևավորել (Night watch protocol) գործադիր իշխանության իրավունքի ուժով փոխանցելիության առնվազն առաջին 15 հոգուց բաղկացած ցուցակ, որը կնվազեցնի ՀՀ-ում պաշտոնատար անձանց ֆիզիկապես վերացնելու միջոցով պետության քաղաքական կողմնորոշման վրա ազդեցության հնարավորությունը:

24, Էական փոփոխությունների ենթարկել ժողովրդագրության ռազմավարությունը՝ հատուկ ուշադրության արժանացնելով սահմանամերձ շրջաններում, հատկապես՝ Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում, բնակչության քանակի արագընթաց ավելացման ծրագրերին: Նվազագույնը նշված մարզերի համար մշակել ծննդաբերության խթանման, հարկային արտոնությունների և միգրացիոն հոսքերի ուղղորդման սոցիալական կետային ծրագրեր:

25. Ժողովրդագրական խնդիրների կառավարման հարցում կարևոր է ՀՀ հատուկ ծառայությունների կարողությունների շարունակական բարելավումը, հատկապես, միգրացիոն հոսքերի կառավարման խնդիրներում: Այս հարցում նոր հնարավորություններ են բացվել 2025 թ. հունվարի 14-ին ՀՀ-ի և ԱՄՆ-ի միջև կնքված ռազմավարական գործընկերության կանոնադրության ստորագրման արդյունքում:

ԱՄՓՈՓԻՉ ԽՈՍՔ

Առկա կախվածությունների և սպառնալիքների բազմաշերտ ու կասկադային համակարգը կարող է ստեղծել անելանելիության տպավորություն, սակայն վերջին տարիներին Հայաստանի գրանցած հաջողությունները, հատկապես՝ Ռուսաստանից սպառազինությունների գնման ոլորտում կախվածությունների նվազեցման, սահմանային, անձնագրային հսկողության կետերից ռուսական ժամանակավոր ներկայության վերացման և արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացիայի ուղղությամբ, ապացուցում են, որ քաղաքական կամքի, կարողությունների ու գիտելիքի համադրման դեպքում հնարավոր է հաղթահարել անգամ տասնամյակների ընթացքում ձևավորված զսպման/կախվածության գործիքները: Սույն աշխատանքի գլխավոր դերը տեսնում ենք առկա խնդիրների գույքագրման և այդ խնդիրների շուրջ շրջանառու խոսույթը՝ «քաղաքական խնդիր, քաղաքական խնդրի լուծում» բանաձևի մեջ՝ տեղափոխելուն նպաստելու մեջ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ սահմանադրություն, 2015

2. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, 2020

3. ՀՀ էներգետիկ հաշվեկշիռ, 2021-2023

4. ՀՀ ժողովրդագրության ռազմավարություն

5. Պայմանագիր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին

6. ՀՀ կառավարության համաձայնությունը՝ ՀԷՑ-ը Կիպրոսում գրանցված ընկերությանը վաճառելու մասին https://www.irtek.am/views/act.aspx?tid=82766&sc=p16#p16 [11.12.2024]

7. ՀՀ ընդլայնված միգրացիոն պրոֆիլ, 2018-2021թթ. https://reintegrationfacility.eu/wp-content/uploads/2023/12/Armenian-EMP-2018-2021.pdf [15.01.2025]

8. ՀՀ կառավարության որոշում https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=42065 [05.11.2024]

9. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2024 https://armstat.am/file/article/demog_2024_7.pdf [11.11.2024]

10. 2010թ. համաձայնագիր՝ նոր ատոմակայանի կառուցման ՀՀ -ՌԴ https://www.irtek.am/views/act.aspx?aid=75039 [27.12.2024]

11. 2023 թվականի հունվար-դեկտեմբերի արդյունքները բնութագրող հիմնական ցուցանիշները https://armstat.am/file/article/sv_12_23a_03.pdf [05.11.2024]

12. Ատոմային համաձայնագիր ԱՊՀ http://www.parliament.am/ibrary/APH/193.pdf [27.12.2024]

13. Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգ https://eec.eaeunion.org/hy/comission/department/deptexreg/tr/default.php [10.01.2025]

14. Ժամանակագրական շարքեր https://armstat.am am/?nid=12&id=01001 [19.01.2025]
15. Միջուկային անվտանգության բնագավառում համագործակցության համաձայնագիր ՀՀ-ՌԴ https://www.irtek.am/views/act.aspx?tid=92822&sc=p312 [07.01.2025]
16. Ալեքսանյան Վ. և ուրիշներ, Ֆուրաժային հացահատիկի արտադրության զարգացման հեռանկարները ՀՀ պարենային անվտանգության ապահովման համատեքստում http://www.old.ysu.am/files/03V_Aleksanyan_D_Hovhannisyan_A_Matinyan_A_Ghukasyan.pdf [09.01.2025]
17. Բացահայտվել է իշխանությունը յուրացնելու նախապատրաստության դեպք (տեսանյութ) https://www.sns.am/hy/news/view/954 [13.12.2024]
18. Դեպի «Զվարթնոց» երկաթգիծ կառուցելու ծրագիրը յոթ տարի առաջ գրվեց սառույցին https://www.armtimes.com/hy/article/142868 [13.12.2024]
19. ԵԱՏՄ երկրների հետ առևտրաշրջանառությունը աճել է մոտ 43 տոկոսով https://www.hetq.am/hy/article/165277 [26.12.2024]
20. Կառավարությունը 327 մլն դրամ սուբսիդիա կտրամադրի «Հարավկովկասյան երկաթուղիներին» https://surl.li/cwupgq [21.11.2024]
21. Հայաստանում խոսքի ազատության և մեդիայի սպառման հետազոտություն https://surl.li/knmzpx [13.12.2024]
22. Հայաստանից ՌԴ ներմուծված ելակի մեջ հայտնաբերվել է վտանգավոր թունաքիմիկատ. ինչ է հայտնի https://www.mediahub.am/post/0b21ea41b645320 [18.11.2024]
23. Մահացած ռուս գործարարի ընտանիքը «Ջերմուկ»-ի դեմ 1,5 միլիարդ ռուբլու դատական հայց է ներկայացրել. ՍԱՏՄ-ից պնդում են՝ որևէ հիմք չկա https://factor.am/850886.html [21.01.2025]
24. Հայտարարություն 2024թ. հունիսի 12-ի դեպքերի վերաբերյալ https://uic.am/19287 [01.12.2024]
25. Ներմուծվող ցորենի 99%-ը ՌԴ-ից է. Հայաստանի ապրանքային «կախվածությունը» ռուսական շուկայից՝ թվերով https://hetq.am/hy/

article/142048 [11.12.2024]

26. Վանաձորը չի կապվում Ֆիոլետովոյին https://surl.li/uegsbz [01.12.2024]

27. Վաշինգտոնում կայացել է Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև Ռազմավարական գործընկերության կանոնադրության ստորագրումը https://www.mfa.am/hy/press-releases/2025/01/14/ARM-US-Charter/13032 [21.01.2025]

28. Annual sugar production exceeds 1.4m tons https://www.tehrantimes.com/news/486385/Annual-sugar-production-exceeds-1-4m-tons [08.01.2025]

29. Iran's grain output surpasses 23 million tons in 2023 https://en.mehrnews.com/news/211387/Iran-s-grain-output-surpasses-23-million-tons-in-2023 [13.12.2024]

30. Ukraine grain exports at 18.9 mln t for 2024-25 season so far https://www.hellenicshippingnews.com/ukraine-grain-exports-at-18-9-mln-t-for-2024-25-season-so-far/ [21.01.2025]

31. Госпрограмма по переселению соотечественников в Россию https://krakow.mid.ru/ru/consular-services/gosprogramma_po_pereseleniyu_sootechestvennikov_v_rossiyu/ [15.11.2024]

32. К середине 2022 года будет завершен капитальный ремонт КПП «Верхний Ларс» https://armenia.mid.ru/ru/press-centre/news/k_seredine_2022_goda_budet_ zavershen_kapitalnyy_remont_kpp_verkhniy_lars_i_prilegayushchego_k_nemu_u/ [05.11.2024]

33. Почему российскую армию на Украине не встречают с цветами https://topwar.ru/193769-pochemu-rossijskuju-armiju-na-ukraine-ne-vstrechajut-s-cvetami.html [11.11.2024]

Սույն աշխատանքում օգտագործվել են հետևյալ հեղինակների՝ «Անվտանգային Քաղաքականության Հետազոտական Կենտրոն» հասարակական կազմակերպության համար արված հետազոտությունները:

Սամվել Ավետիսյան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

© Բոլոր նյութերը պաշտպանվում են հեղինակային և հարակից իրավունքների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Արգելվում է տեքստի կամ պատկերների վերարտադրումը, տարածումը, նկարազարդումը, հարմարեցումը և այլ ձևերով վերափոխումը, ինչպես նաև այլ եղանակներով օգտագործումը, եթե մինչև նման օգտագործումը ձեռք չի բերվել «Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոն» հասարակական կազմակերպության և «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպության թույլտվությունը:

«Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոն» ՀԿ
«Research Center On Security Policy» NGO

«Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ
«Union of Inofrmed Citizens» NGO